Нормы, внесенные в палату президентом РФ Дмитрием Медведевым, предоставляют субъектам РФ право определять перечень таких мест, где детям ночью запрещается быть без сопровождения родителей либо лиц, их заменяющих. К таким местам относятся игорные заведения, рестораны, кафе, бары, клубы, кинотеатры, иные помещения, используемые в сфере развлечений, а также улицы, парки, скверы, стадионы, общественный транспорт.

Поправками ко второму чтению регионам предоставлена возможность распространять эти ограничения на детей до 18 лет, а не до 14 лет, как предусматривалось концепцией законопроекта, и считать «недетским» временем промежуток между 22:00 вечера и 6:00 утра по местному времени.

При этом субъекты РФ получают право «снижать возраст, до достижения которого не допускается нахождение детей в ночное время в установленных местах (но не более чем на 2 года), и сокращать период ночного времени с учетом сезона года и климатических условий». Они также будут определять порядок уведомления родителей или органов внутренних дел об обнаруженном в неположенное время в неположенном месте ребенке и порядок возвращения его либо домой, либо в приют, если ребенок — сирота, сообщает ИТАР-ТАСС.

Согласно закону, для оценки предложений по определению мест, нахождение в которых может нанести вред физическому, духовному и нравственному развитию подростков, будут создаваться специальные экспертные комиссии. За попустительство нахождению несовершеннолетних в указанных местах предусматривается ответственность.

Как пояснила глава профильного думского комитета по вопросам семьи, женщин и детей Елена Мизулина, «главная задача новых норм — оградить ребенка от насилия и не допустить втягивания детей в различные преступления».

В качестве эксперимента «комендантские часы» действовали в 15 регионах страны. По данным главы МВД Рашида Нургалиева, по итогам 11 месяцев 2008 года в Липецкой области количество преступлений, совершенных несовершеннолетними или при их соучастии, сократилось на 11,6%, а в ночное время — на 4,5%. На 59,4% снизилось число преступлений, совершенных в отношении несовершеннолетних.

«Вести.Ru».

ՄՇԱԿՈՒՅԹ

Մետաղի եւ հոգու մեղեդայնություն

Ինքնատիպությունը արվեստագետի անհատականությունն է, նրա դեմքը, չկա անհատականություն՝ չկա և արվեստագետ:

Արա Ալեքյան անհատականությունը գտել է իրեն հարմար նյութը, իր տեսնելու կերպը՝ աչքով տեսանելին, ընկալածն ու հոգում թաքնվածը ներկայացնելու համար: Եվ նրա երևակայության մեջ, ինչպես ասում են, հնչում է մետաղի իր սիմֆոնիան:

Ինձ՝ նրա արվեստի երկրպագուիս համար գաղտնիք չկա. նրա ստեղծածը մեզ համար Աստծո պարգև է, նրա տաղանդը ստեղծագործ ուժի բացատրությունն է ու պատճառը: Արա Ալեքյանը, ըստ սովորության, չի գալիս ուրիշ տեղից, իրեն նախորդած մեկ ուրիշից, այլ՝ ինքն իրենից:

Նրա գործերով հիանում են արվեստն ու գեղեցիկը գնահատողները, ոչ միայն Հայաստանում, այլև՝ արտերկրում:


Վաղուց արդեն սովորական են դարձել բարձրագույն մրցանակները նախկին միութենական, ռուսաստանյան և միջազգային ցուցահանդեսներում (միջազգային ցուցահանդեսներ Մոսկվայում, Բեյրութում):


- Արվեստը ստեղծելը սովորովի չէ, դա բնատուր է լինում. ծնվում է մարդու հետ, հետագայում նրա մեջ էլ հեսանվելով, հղկվում է, դառնալով մշակույթի արժեք: Արան էլ այդ արժեքներ ստեղծողներից է:

Նա համոզում է բոլորին, որ բարոյապես և ֆիզիկապես մաշված այդ նյութերը միգուցե ավելի շատ ստեղծված են արվեստի նմանատիպ արժեքներ դառնալու, իրենց կերպը ստանալու ու անմահանալու համար: Նրանց հետ շփվելիս պետք է զգույշ լինել՝ հանկարծ չարթնացնելով, նրանց դարձնել սովորական կերպեր:

Աչքի համար Արայի գործերը եզրագծեր չունեն. որ մասից են սկսված և որտեղ ավարտված:

Արսեն ՌԱՖԱԵԼՅԱՆ
ՀՀ նկարիչների միության անդամ, գեղանկարիչ







Ամեն մեկը յուրովի է մեկնաբանում նրա ստեղծած արժեքները, և կարևորն այն է, որ իր գործերով Արա Ալեքյան արվեստագետը ստիպում է մարդկանց խոսել ու մտածել:

Խորությամբ տիրապետելով մետաղի հետ վարվելու տեխնիկային՝ Արան կուռք չի դարձնում ոչ մեկին, հենվում է իր գեղարվեստական երևակայությունների վրա՝ ինքը ստեղծելով յուրօրինակ «Ալեքյանական» ստեղծագործական ոճ:

Իր արվեստը ոչ մի ուղղության մեջ չդնող (Արայի աշխատանքները անվանում են «ավանգարդիստական» կամ համեմում զանազան «սյուսերով», որ դրանք բնավ էլ «ավանդական» չես համարի) Արա Ալեքյանը ցուցահանդեսներից մեկի առթիվ հրատարակված ինֆորմացիոն նյութերի բաժնում իր արվեստը բնութագրել է այսպես. «Մետաղի թափոնի ռեաբիլիտացիա, անցյալի ապագայացում»!!!

Միգուցե:


Նրա ստեղծած նրբաճաշակ գործերը յուրահատուկ են իրենց կառուցողակատարողականությամբ (մետաղյա ձի, ցուլ, մետաղյա մարդ), որոնք, ըստ իս, երկար փնտրտուքի և հեղինակի ստեղծագործական երազանքի արդյունք են:



Արա Ալեքյան

Կրթությունը

1979 թ. Երևանի Թերլեմեզյանի անվան գեղարվեստի ուսումնարան
1985 թ. Երևանի գեղարվեստի ինստիտուտ
1989թ. Մոսկվայի գեղարվեստի ակադեմիայի Երևանյան մասնաճյուղ





Արա Ալեքյան արվեստագետի շնորհը անսահման է քանդակագործի հարուստ պաշարով, հոգևոր պատկերումների ներաշխարհով (Փարաջանովի, Պերճ Պռոշյանի, Վիլիամ Սարոյանի, Մինաս Ավետիսյանի կիսանդրիներ):

- Ինձ շատ է հետաքրքրում մեռած նյութը, մետաղը, որ փողոցում ոչինչ է կամ լավագույն դեպքում թափոն: Ես հաճույք եմ ստանում անպետք իրին կյանք տալով, այն որոշակի ձևի մեջ դնելով:

Եվ, իրոք, այդ հազարավոր թափոն դետալների հավաքածուներում չկա և ոչ մի ավելորդություն ու պատահականություն, դրանք բնական են, ինչպես կյանքը, և պարզ ու անկեղծ, ինչպես զգացմունքները (երկրաշարժի զոհերի հիշատակին կառուցված հուշարձան կոթողներ Վեդիում, Գյումրիում):

Նրա գործերում կերպարների տեսանելի կոնկրետությունը, մանրամասների խնամքով, համարձակ լուծումները զուգակցվում են վեհ, ստեղծագործ հոգեբանական տոնուսի միասնությամբ՝ սատարված իրենց զարացմամբ, իիրավի գեղարվեստական ստեղծագործության հետ:

Լեւոն ԽԱՉԱՏՐՅԱՆ



Հայե՛ր միացե՛ք, միացե՛ք հայե՛ր,
Արցախն է մեզ կանչում, օգնության հասնենք,
Դեռ ճամփա ունենք, պիտ հասնենք Սասուն,
Քաջերի հողը մեզ է սպասում:

Գուսան ՀԱՅԿԱԶՈՒՆ

Այս երգը նմանվում է կենարար մի հեղուկի, որը երակներիդ միջով տարածվում է դեպի ողջ էությունդ ու սիրտդ, արթնացնում ու բորբոքում պահում հայ լինելու ոգուն: Այս երգը մնայուն է և հայկական, ուրեմն այն ստեղծողը ճշմարիտ ու իսկական հայ է, ժողովրդի սրտից ջուր խմող, ժողովրդի մտածածն ընկալող ու իրեն վերադարձնող երգահան մարդ:

Օֆելյա ՏՈՆՈՅԱՆ, լրագրող

Գուսան Հայկազունու երգարվեստի գլխավոր երակը մեծ Սերն է առ հայրենիք, ինքնաարտահայտման ամենախոր այդ զգացմունքը առ Հայաստան, առ Արցախ: Նրա երգերը ազգային ոգու հաղթանակների գրավոր վկայություններն են: Նրա ամեն մի երգ անմիջապես հայտնվում է հայ մարդու շուրթերին և դառնում նրա հոգևոր ճանապարհի ուղեկիցը: Եվ դա տեղի է ունենում ինքնստինքյան, այսինքն՝ ոչ ոք այդ երգերը հատուկ չի սովորում: Երգերն են թափանցում մարդկանց հոգիները՝ նրանցում էլ ավելի թեժացնելով հայրենասիրության կրակը:

Թառել ես լեռներին, ունես հազար շեն,
Արծիվների բույն ես, ընբոստ Գետաշե՛ն,
Բարբարոս ցեղերին անդադար սանձող
Քաջերի ամրոց ես, իմ քա՛ջ Գետաշեն:

Իր երգերով ու ոգեշնչող խոսքերով՝ ամենքիս հարազատ, ամենքիս հոգու կանչին ունկնդիր:

Այս առաքելությամբ արդեն մեկ ու կես տասնամյակ ստեղծագործում, ոգեշնչող երգարվեստը հայրենի եզերքում ծաղկեցնում է Արարատի շուքի տակ՝ «Հայոց Կարթագենում»՝ հինավուրց Արտաշատում ծնունդ առած մեր գուսանը՝ Գագիկ Հայկազունը (Գագիկ Ստեփանի Նազարյան): Ահա հայ գուսանների, աշուղների միության նախագահ, բանասիրական գիտությունների դոկտոր Շավիղ Գրիգորյանի խոսքը՝ ասված ի տրիտուր գուսանի ազգանվեր ու ազգաշահ գործունեությանը, որ այսպես, խոնչանքով իրականացնում է հայ երգի այսօրվա երախտավորը.

- Գովք ու փառաբանություն, հիացմունք ու պաշտմունք հայրենիքի ու հայրենականի հանդեպ...

... անվան մասին՝ Հայկազուն, որ նախընտրել է ինքը՝ դարձյալ ամենևին ոչ հենց այնպես:

Նա հենց այնպես ծավալ ու քանակ լրացնող որևէ երգ չունի:

Բնությունը նրան օժտել է խոսքի և երաժշտության հորինման աներևակայելի կարողությամբ, ասել է թե, երաժշտությունը գալիս է նրա ներսից ու պիտի հնչի, կատարվի:

Այլ կերպ անհնար է. դա է Հայկազունու երեկվա և այսօրվա կյանքը, որ ինքը համարում է հայ ժողովրդի՝ նրա անցյալի, այսօրվա ու վաղվա հանդեպ տածած հախուռն սիրո առհավատչյա ու ամուր հավատամք:

Ինչքան էլ որ դժվար լինի, դիմացե՛ք,
Վախկոտն ամեն օր է մեռնում, իմացե՛ք,
Քաջերը՝ մեկ անգամ փառքով, իմացե՛ք,
Հողն արյունով են պահում, իմացե՛ք:

Հայկազունու բազմաբնույթ ու բազմաբովանդակ ինքնարտահայտման միջոցը երաժշտության տարածքն է, ընկերակիցը՝ իր ժողովուրդը՝ իր ունկնդիրը:

ՀՊԱՐՏ ԳՆԱՑԵՔ

Պատերազմ եք գնում, ուրախ գնացե՛ք,
Վարդանի արյունն է ձեր մեջ, իմացե՛ք,
Նոր կազմավորված հայոց բանակի,
Առաջին զինվորն եք, հպարտ գնացե՜ք:

ԿՐԿՆԵՐԳ. - Ինչքան էլ որ դժվար լինի, դիմացե՛ք,
Վախկոտն ամեն օր է մեռնում, իմացե՛ք,
Քաջերը՝ մեկ անգամ փառքով, իմացե՛ք,
Հողն արյունով են պահում, իմացե՛ք:

Քաջերի կորստով ցավել ենք դարեր,
Հողերի կորստով՝ հազարամյակներ,
Այժմ շատ են պետք մեզ հաղթանակներ,
Դեպ փառք ու հաղթանակ, այսպես գնացե՛ք:

ԿՐԿՆԵՐԳ. - Ինչքան էլ որ...

Դուք մեր նախնյաց հողը նորից ե՛տ բերեք,
Մեր հայկազյան փառքը նորից ե՛տ բերեք,
Մուշն ու Սասուն, Արարատը ե՛տ բերեք,
Դեպ Արցախ, Մուսալեռ բարով գնացե՜ք:

ԿՐԿՆԵՐԳ. - Ինչքան էլ որ...

20 հունվարի, 1993 թ., ք. Արտաշատ

Գետաշեն

Թառել ես լեռներին, ունես հազար շեն,
Արծիվների բույն ես, ըմբոստ Գետաշե՛ն,
Բարբարոս ցեղերին անդադար սանձող
Քաջերի ամրոց ես, իմ քա՛ջ Գետաշեն:

ԿՐԿՆԵՐԳ. - Չորս կողմդ անդունդ է,
ճամփեքդ՝ փակված,
Երկնքում սև ու մութ ամպեր կուտակված:
Շուրջդ շատ հայկական շեներ են լքված,
Բայց դու կա՛ս, կմնա՜ս հավերժ, Գետաշե՜ն:

Դու պիտի մնաս ու պիտի դիմանաս,
Հակառակ թշնամուդ պիտի շենանաս,
Մայր Հայաստանին պիտի միանաս,
Արցախի դարպասն ես, իմ քա՛ջ Գետաշեն:

ԿՐԿՆԵՐԳ. - Չորս կողմդ...

Զահելներ քիչ ունես, իմ քա՛ջ Գետաշեն,
Բայց ծերերդ էլ ոչ մի բանով պակաս չեն,
Քո ամեն մի կինը՝ մի ժայռ տնաշեն,
Քեզ հաղթել չի լինի, իմ քա՛ջ Գետաշեն:

ԿՐԿՆԵՐԳ. - Չորս կողմդ...

20 սեպտեմբերի, 1990 թ., ք. Արտաշատ

ՀԱՅԵ՛Ր, ՄԻԱՑԵ՛Ք

Հսկա երկիր էր Հայաստանը մեր,
Բայց ինչքան ասես թշնամիք ուներ:
Բոլոր կողմերից հեռուն, դրացին,
Չեռք ձեռքի բռնած մեզ բզկտեցին:

Ուս ուսի տված, առյուծի նման
Ետ բերենք հողն ու փառքը հայության:

ԿՐԿՆԵՐԳ. - Հայե՛ր, միացե՛ք, միացե՛ք, հայե՛ր,
Արցախն է մեզ կանչում, օգնության հասնենք,
Դեռ ճամփա ունենք, պիտ հասնենք Սասուն,
Քաջերի հողը մեզ է սպասում:

Ախ Նախիջևան, հայոց բնօրրան,
Անթիվ թշնամիքդ եկան անցկացան,
Քեզ բաժին ընկավ սև բախտը դաժան,
Հայաթափվեցիր, հո՛ղ պապենական:

Ուս ուսի տված, առյուծի նման
Ետ բերենք հողն ու փառքը հայության:

ԿՐԿՆԵՐԳ. - Հայե՛ր, միացե՛ք...

Պայծառ գալիք է սպասվում հային,
Այս դժվար պահին լինենք միասին,
Չի հանգստացել մեր հին թշնամին,
Ուզում է նորից կոտորել հային:

Ուս ուսի տված, առյուծի նման
Ետ բերենք հողն ու փառքը հայության:

ԿՐԿՆԵՐԳ. - Հայե՛ր, միացե՛ք...

17 մայիսի, 1988 թ., ք. Արտաշատ

Էջը կազմեց՝ Լևոն ԽԱՉԱՏՐՅԱՆԸ



ԹՈՄԱՍ ԷԴՈՒԱՐԴ ԼՈՈՒՐԵՆՍ ԱՐԱԲԻԱՑԻ (1888 - 1935)

Արևելագետի կրթությամբ՝ 20-րդ դարի նշանավորագույն հետախույզներից: Ինտելիջենս սերվիսի գործակալ: Գործել է Արաբական աշխարհում. հրահրել և հաջող ավարտի է հասցրել արաբների՝ հակաթուրքական ապստամբությունները, հիմնել է Իրաքի Թագավորությունն ու Քուվեյթի էմիրությունը, ճարտարապետել արաբական աշխարհի այսօրը: 1920-ականներին գործել է Կարաչիում, Փեշևարում, աֆղանական սահմանում. նրա օրինությամբ 1929-ի հոկտեմբերին իր զորքերով Քաբուլը գրաված Մուհամմեդ Նադիրը հիմնեց աֆղանական անգլամետ արքայական նոր դինաստիա: Գործողություններ է ծավալել ԽՍՀՄ-ի դեմ, կյանքի վերջին տարիներին հարել է անգլիական ֆաշիզմին: Կյանքից հեռացել է առեղծվածային ավտովթարից՝ 47 տարեկանում:

ԱՅԴ ԱՆՏԱՆԵԼԻ ՀԱՅԵՐԸ

(Լինկոլն Սթեֆընսի հարցազրույցը Լոուրենս Արաբիացու հետ)

Հայ ժողովուրդը միանգամայն զրկված չէ իրերն իրենց իսկական արժեքով ու նշանակությամբ տեսնելու և կշռադատելու ընդունակությունից: Բայց դրա եզակի վկայությունները մնում են կղզիացած և առանձնացված՝ իբրև անհասկանալի, հալածվող բացառություններ՝ հայ կղերական դիվանագիտության կատարյալ և անսահմանափակ տիրապետության ներքո:

ԼԵՈ

Դա իմ հարցազրույցն էր: Թեև հյուրանոցի իր ապրած սենյակում էր, բայց ինքս էի խնդրել տեսակցությունը, և իմ նպատակն էր այդ կայսերական հետախույզից մի բան իմանալ Փոքր Ասիային և Մերձավոր արևելքին վերաբերող գործնական քաղաքականության մասին: Սկզբում կարծում էի, թե ինքս էի վարում խոսակցության ընթացքը: Հետո միայն, մի տեսակ ցնցվելով կռահեցի, որ նա էլ մի նպատակ էր ունեցել, և որ այդ նպատակն էր՝ իմ ուղեղը լցնել հայերի վրա ամերիկյան մանդատ հաստատելու վերաբերյալ բրիտանական պրոպագանդով: Ահա այդ էր, որ կռահեցի: Ուրիշ բաներ էլ: Ես՝ սկզբունքներով անկախ անհատս, շշմել էի և բավական նվաստացած էի զգում ինձ՝ ինչո՞ւ մենք՝ ամերիկացիներս, պետք է աշխարհի մյուս կեսը գնանք հայերին հոգալու և ոչ միայն նրանց փրկելու թուրքերից, հույներից, ֆրանսիացիներից, իտալացիներից, բրիտանացիներից և հենց իրենցից էլ, այլև, մի տեսակ, ինքներս էլ մեզնից և նրանցից փրկելու:

Նա ասաց, օրինակ, որ հայերը «մարդկային անտանելիության վերջնական խոսքն են»: *Որպես ցեղ՝ ակադեմիկ բանավեճում նրանք համանման են «վերջին մարդուն»*.[1] Իսկ ինձ նման իր գործն իմացող, ծախողակ երազողի համար՝ ազգերի մեջ ամենանվաստացվածը անդիմադրելի հմայք ուներ և ունի. այդպես էլ ասացի նրան:

Անգլիական հումորը մերինի նման չէ: Հակառակն է: Ամերիկյան հումորը, գոնե մասամբ, ասվածի մեջ է: Բրիտանական հումորը բրիտանացու չասածի՛ մեջ է: Այս բրիտանացուն ակնհայտորեն շատ դուր եկավ իմ ասածը: Ինձ թվաց, որ նա ուրախությամբ ծիծաղելու է կամ նման մի բան: Բայց նա փքվեց Բրիտանական կայսրության չափ, ասես պայթելու էր: Սակայն չպայթեց, չծիծաղեց, չասաց որևէ բան, որ հումորի դույզն-ինչ նշան ցույց տար: Երկար դադարից հետո միակ խոսքը, որ ասաց, այս էր.

- Լավ:

Եվ ապա, կրկին մի դադարից հետո, երբ վերագտել էր իր ինքնատիրապետումը, մեր ամերիկյան իդեալիզմի մասին խոսեց լրջորեն, ավելի ճիշտ՝ բավական տաղտկալիորեն. թեև ինքը համարում էր, որ դա սքանչելի է: Իսկ ըստ իս՝ մի քիչ չափից ավելի էր սքանչելի համարում: Կարծում էր, թե մենք՝ ամերիկացիներս չափից ավելի իդեալիստ ենք: Եվ գտնում էր, որ հայերը չափից ավելի գործնական են: Ուստի մեկս մյուսին կարող ենք շտկել, մենք բուժիչ ենք նրանց համար, նրանք՝ մեզ համար: Երկուսս էլ հուսահատական պարագաներ ենք, մանավանդ հայերը:

Ես այնպես եզրակացրի, *որ նա մի անասելի համակրանք ունի հայերի հանդեպ, կամ էլ, ավելի ճիշտ այսպես ասեմ՝ նրանց վերաբերյալ ունի մի այնպիսի իմացություն կամ փորձառություն, որ նրան թույլ է տալիս մարդկայնորեն հասկանալ թուրքերին և հայերի բոլոր մերձավոր հարևաններին, որոնք երբևէ ջանացել են ոչնչացնել այդ որբ ցեղը:* Կարծես թե նրա մտքինն այն էր, որ դա հայերի հանդեպ անելիք միակ բանն է: Ուղղակի այդպես չասաց: Կարող եք նկատել, որ շատ էլ ազատորեն չեմ մեջբերում այս հեղինակության խոսքերը: Պատճառն այն է, որ նրա մեթոդը, ինչպես երևում է, ոչ թե իր կողմից որևէ բան ասելն էր, այլ ստիպել ինձ, որ իր տպագրել ցանկացած բաները ե՛ս ասեմ և՝ այնպիսի ձևով, որ անհրաժեշտության դեպքում կարողանա ժխտել դրանք: Ուստի նա չասաց, թե հայերը պետք է ամբողջությամբ ոչնչացվեն: Պարզապես իմ մեջ այնպիսի տպավորություն ստեղծեց այն ժամանակ, թե դա է հայկական հարցի միակ լուծումը, և թե այդ պատճառով էր ցանկանում, որ ամերիկացիներս մեզ վրա վերցնենք այդ գործը:

Նա այնպես էր համարում, կամ ինձ էր ստիպում համարել, թե թուրքերը չպետք է անեն այդ գործը. նրանք չափազանց պրիմիտիվ են և՝ քրիստոնյա չեն: Ոչ էլ հույները. սրանք էլ շատ են հաճույք զգում դրանից և արդյունավետ չեն. երբեք որևէ բան մինչև վերջ չեն հասցնում, և երբ հայերին սպանելու իրենց գեղագիտական հաճույքը հագենա, ձեռք կքաշեն: Այդպես էլ բոլոր հին, մրցակցած, ախոյան ցեղերը դադարեցրել են գործը՝ նախքան բոլոր հայերին սպանելը: Նույնիսկ երբ բոլորը միասին էին գնում խնդիրը կատարելու, միշտ էլ թողնում էին մի զույգ այստեղ, մի զույգ այնտեղ՝ Ադամ ու Եվաներ, որոնք, հենց որ մեկը կռնակ դարձներ նրանց, բազմանում, բազմանում ու բազմանում էին, այնպես որ հաջորդ անգամ Հայաստան այցելողը կրկին հայեր կտեսներ այնտեղ, միլիոնավոր ու միլիոնավոր հայեր, բոլորը հեզ ու համեստ, բայց ցերեկը գործով զբաղված, իսկ գիշերը գաղտնորեն բազմանալով ու կամացուկ տարածվելով ու տարածվելով ու...

Նա ինձ վրա ոտից գլուխ տարածեց իր մալթուսական հուսահատությունը և մի այնպիսի սարսափ հայերից, որ քիչ մնաց կուլ տայի իր ամբողջ որոգայթը ամերիկահայկական մանդատի վերաբերյալ, երբ իմ փրկարար ամերիկյան հումորը շունչս տեղը բերեց:

- Բայց ինչո՞ւ հենց բրիտանացիներն էլ չանեն *այդ գործը*,- հարցրի և, ակնկալելով իր հումորի զգացումը, ժպտացի: Իզուր: Կարծում եմ՝ ամերիկյան հումորի զգացումը նա չուներ. սպասեց, որ իմ զվարթ ժպիտը չքանա, ու հետո երբ տեսավ, որ ես իմ մեջ եմ քաշվել նորից և լրիվ լուրջ եմ, պատասխանեց ինձ լրջորեն:

- Հայերի լիակատար կոտորածը, - պատճառաբանեց, - կարող է սկանդալ դառնալ, եթե դա բրիտանացիներն անեն, - ու բացատրեց, որ թեպետ իրենց կայսրությունը դիմացավ որոշ այդպիսի ցնցումների և պետք է, անշուշտ, դիմանա ուրիշ ցնցումների ևս, բայց չափից ավելին, հենց ա՛յս ժամանակ[2], կարող է սասանել կայսրությունը: - Իսկ կայսրությունը, հենց ա՛յս օրերին, չպետք է սասանվի անհարկիորեն: Բրիտանական կայսրությունը համաշխարհային կառավարման նախատիպն է: Մեր բոլոր մեծ տագնապները՝ պատերազմներ, հեղափոխություններ, գործադուլներ, համաճարակներ և այլն, հետևանք են այն իրողության, *որ երկրագունդը թեև ամբողջություն է, բայց չի*

կառավարվում որպես ամբողջություն: Բրիտանացիները մի օր պիտի վերջ տան այս անիշխանականությանը: Բայց կայսրությունը երիտասարդ է տակավին և հարաբերաբար փոքր, թույլ և գերծանրաբեռնված: Հաշվի առեք մայր կղզիները, գաղութային ռազմավարական կետերը, ծովերը և առևտրական ճանապարհները, բոլոր այն նոր ծանրություններն ու պատասխանատվությունները, որ Բրիտանական կայսրության ուսերին ընկան գերմանական իմպերիալիզմի պարտությամբ: Ո՛չ: Բրիտանական կայսրությանը պետք է խնայել առայժմ: Հետագայում, երբ, այսպես ասած, ծովերի ազատությունը ցամաք հանվի, և երբ բրիտանական իշխանությունն ալիքներից տարածվի ցամաքի վրա, բոլո՛ր ցամաքների, ապա Մեծն Բրիտանիան կկարողանա, և պետք է կարողանա ուրախությամբ ընդառաջ գնալ հաղթահարելու մի այնպիսի ցնցում, որ ես (նա հենց այդպես էլ ասաց` «ես») առաջարկում էի Հայաստանում: Բայց ո՛չ դեռ, ո՛չ այժմ: Ո՛չ կայսրության դեռ մանուկ հասակին:

- Բացի այդ, - հարեց նա, - բրիտանական իմպերիալիզմն այս փուլում շահագրգռված է ավելի բնական հարստություններով, քան ժողովուրդներով` որպես այդպիսիք: Անգլիացիները գործնական մարդիկ են, ո՛չ իդեալիստներ, հասկանու՞մ եք: Նրանք գիտակցում են, որ համաշխարհային մի կառավարություն պետք է հիմնվի, բայց ոչ թե «ձեր» Ազգերի լիգայի նման` գաղափարների և իդեալների, սկզբունքների և ժողովուրդների վրա, այլ շոշափելի բաների` նավթի, հանքանյութի, օդային տարածության, ծովերի:

- Բայց, - առարկեցի ես (և կարող եք տեսնել, թե ուր էր հասցնում նա ինձ. առարկում էի հօգուտ իր երկրի` իմ երկրին ընդդեմ), - հարուստ հողեր և շահավետ հանքավայրեր կան Հայաստանում:

Նա լուռ մնաց: Այնքան երկար մնաց այդպես լուռ, որ ինձ թվաց, թե շփոթության եմ մատնել նրան, թե նա չգիտեր Հայաստանի հարստությունների մասին: Բայց կրկին նկատեցի ուղղելու և պայթելու նրա հակումը: Եվ որքա՜ն էի ցանկանում, որ նա ծիծաղի: Կարծում եմ` դա կթեթևացներ ինձ էլ, նրան էլ: Բայց ոչ, նա չծիծաղեց: Չժպտաց նույնիսկ: Պարզապես սպասեց, ինչքան կարող էր, ապա ինձ հիշեցրեց, որ լսած կլինեմ, ինչպես, ասաց, ինքն էլ է լսել, թե Հայաստանը պետք է բաժանման ենթարկվի: *Բուն երկիրը, ուր բնական հարստություններն են, պետք է անջատվի առաջամասից, ուր ոչինչ չկա բացի հայերից*: Ամերիկյան մանդատը պետք է լոկ հայերի վրա լինի: Մի ուրիշ դաշնակից, ոչ թե բրիտանացիք, այլ մի ուրիշ` հավասարաչափ գործնական տերություն պետք է ստանա Հայաստանը:

-Բայց, - դարձյալ առարկեցի ես, - ի՞նչ օգուտ մի երկրի բնական հարստություններից առանց այն ժողովրդի, որ պետք է մշակի դրանք: Հանքերը, նավթի պաշարները, բերրի հողերը, մի խոսքով բնական հարստությունները, - համբերությամբ բացատրեցի նրան, - ոչ մի օգուտ չեն տա կապիտալին` առանց այն աշխատուժի, որ պետք է փորի ու զարգացնի դրանք: Եվ մի երկրի բնիկներն ամենաբնական աշխատուժն են դրա համար, ամենաէժանը, ամենահնազանդը, ամենաքիչ կազմակերպվածը, լավագույնը:

Տեսնում էի` տաղտուկ է զգում, բայց քաղաքավարի էր: Լսում էր ինձ, ուստի իրար ետևից օրինակներ էի բերում ամերիկյան, ինչպես նաև բրիտանական գաղութներից` նրան ցույց տալու համար, որ սխալ է անջատել մի երկրի ժողովրդին այդ երկրի բնական հարստություններից: Պետք է միասին օգտագործվեն դրանք, միասին զարգացվեն, և այդպես էլ արվում է սովորաբար: Չկա ուրիշ ճանապարհ: Նկարագրեցի թուրքերի կամ ֆրանսիացի դրամատերերի կամ որևէ չաշխատող ժողովրդի անօգնականությունը, երբ կքանան օգտագործել Հայաստանի հարստությունները: Այսպես պերճախոսում էի, ու մի պահ թվաց` բավականին հաջող:

- Ես կոչ եմ անում, - գոչեցի վերջապես, - ոչ թե գաղափարապաշտորեն, ոչ թե *«Հայաստա՛նը հայերի համար»*, այլ գործնականորեն` *«Հայե՛րը Հայաստանի համար»*:

Նա ինձ նայում էր ոտից գլուխ չափելով, հետաքրքրությամբ` ինձ թվաց: Կարծես մի նոր պատկերացում էր ստանում ամերիկացիներիս մասին: Ասել էի, որ չգիտե մեզ, և նա թե`

- Որևէ գիտակից անգլիացի կարող է հասկանալ որևէ անգիտակից ամերիկացու:

Շատ էլ չեմ ըմբռնում, թե ինչ էր ուզում ասել դրանով, բայց դրա նման դատողություններն էին, որ ինձ տալիս էին այն խռովիչ տպավորությունը, թե նա բոլորովին սխալ էր պատկերացրել մեզ: Ու որոշեցի ցույց տալ նրան, նախքան հաշիվները կմաքրեր ինձ հետ, թե ոչ բոլոր ամերիկացիներս ենք այնպիսի զուտ իդեալիստներ, ինչպես նա և շատ եվրոպացիներ հետևցրել են այն մի օրինակից, որ նախագահ Վիլսոնն է և նրա 14 կետերը: Բայց նա չափազանց երկար ու լուռ ուսումնասիրում էր ինձ: Սկսեցի մտածել, որ ինչ-որ սխալ էր գտնում իմ մեջ կամ մեր մեջ. գուցե ես շա՞տ էի թեքվել գործնականության կողմը, ու հիշեցի, թե ինչպես էր նա հայերին կշտամբում դրա համար: Ուստի դարձ կատարեցի: Ավելի գաղափարապաշտորեն և, հուսով եմ, հայրենասիրաբար խոսեցի կրկին:

- Եթե ամերիկացիներս հանձն առնենք հայերին, - հայտարարեցի, - նրանց իսկ օգտի համար կանենք այդ բանը: Նրանց կկառավարենք միշտ էլ այն գաղափարով, որ նրանց ընդունակ դարձնենք իրենք իրենց կառավարելու:

- Այո, այո, մենք հասկանում ենք այդ բոլորը, - ասաց նա: Բայց զգացի, որ չի հասկանում, ուստի ուղղակի շարունակեցի իմ սիլլոգիզմը:

- Լավ, - ասացի պատշաճորեն, - ուրեմն պետք է դրանում տեսնեք նաև հենց այդ նպատակը. որպեսզի հայերին ընդունակ դարձնենք իրենք իրենց կառավարելու, պետք է աշխատեցնենք նրանց: Ու քանի որ չես կարող մի ժողովուրդ աշխատեցնել առանց մի այնպիսի բանի, որի վրա աշխատեցնես, մենք կարիքը կունենանք Հայաստանի հողերի և հանքերի: Ոչ թե հարստությունները կորզելու համար նրանցից, այլ օգտագործելու որպես ուսումնադաշտ, ուր ժողովրդին վարժեցնենք աշխատասիրության, խնայասիրության և... բոլոր այն քրիստոնեական առաքինություններին, որոնց միջոցով նրանց դարձնենք լավ մարդիկ և լավ քաղաքացիներ:

Շփոթահար, ուռած տեսք էր ընդունել նա: Չգիտեի` ինչ է պատահել նրան, մինչև որ վերջապես որոշեց արտահայտվել:

- Խնայասիրությունը չի պակասում հայերին, - ասաց նա չոր, - և անշուշտ գիտեք, որ քրիստոնյաներ են նրանք, *երդվյալ քրիստոնյաներ*:

Իհարկե գիտեի: Պարզապես, ոգևորության մեջ, մի պահ մոռացել էի այդ բանը: Համենայն դեպս նա ինձ բռնել էր այդ կետում, ուստի վերադարձրեց ինձ իմ շրջանի սկզբին:

- Բայց, - ասացի, - հայերը պետք է աշխատեն: Դա՛ է հաջողության գաղտնիքը, լինի անհատի, լինի ազգի համար` աշխատանք, համառ, եռանդուն աշխատանք: Եվ հայերը պե՛տք է ունենան Հայաստանը` դրա վրա աշխատելու համար:

- Հայերը չեն աշխատելու, - ասաց նա: - Դա՛ է ցավոտ կետը ձեր ծրագրում, դա՛ է հայերի էլ ցավոտ կետը: Ճիշտն ասած, դա է ցավոտ կետը բոլոր այս հին ցեղերի, որոնք եղել են քաղաքակիրթ, սովորել են խաղը և, մի ժամանակ տիրած լինելով աշխարհին և աշխատեցրած, կորցրել են իշխանությունը և դեգրադացվել, ինչպես դուք եք ասում: Կամ էլ, ինչպես ես եմ ասում, շարունակել են, առաջ են գնացել` տրամաբանականորեն, հոգեբանորեն, բնախոսականորեն: Նրանք չեն սիրում համառ, եռանդուն աշխատել: Դա է, որ նրանց տարբերում է այն երեխայանման, խակպես հետամնաց ժողովուրդներից, որոնց հետ գործ եք ունեցել ամերիկացիներդ: Նախնական ժողովուրդները պարզապես ծույլ են: Նրանց կարելի է ստիպել աշխատելու, զարգանալու, նրանց հնարավոր է շահագործել, եթե ուզում եք: Մի որոշ հույս կա նրանց համար, մի որոշ օգուտ նրանցից: Իսկ այս առաջադեմ ժողովուրդները, երբեմնի քաղաքակիրթ ազգերը ծույլ չեն: Նրանք չափից ավելի խելացի են ուրիշների օգտին աշխատելու համար: Իրենք իսկ շահագործողներ են` բնազդական, բնածին, անուղղելի, անհուսալի շահագործողներ: *Բոլոր ազգերը բաղկացած են զարգացող մարդկանցից, նրանք մարդ են աճեցնում: Նրանք խոսում են իրենց երկրները զարգացնելու մասին, բայց հակառակն է. նրանց երկրներն են զարգացնում իրենց: Իսկ հին ազգերը ցույց են տալիս մարդկանց այն տեսակը, որ այժմ նոր ազգերը կազմավորում են իրենց մոտ: Այս հին ժողովուրդները բնաշրջության արդյունք են:* Դուք կարող եք Միջերկրականի ափերին տեսնել այն տիպը, որ ինքներդ այժմ ընտրասերում, աճեցնում, բնաշրջում եք ձեր հայրենիքում: *Հին ցեղերից նրանք, որ այստեղ ապրում են դեռ, վերապրածներն են մի քաղաքակրթության, որ բնույթով առևտրական էր, ինչպես ձերը:*

- Մերը, - ուղղեցի ես, անգլիացիներին էլ մտցնելու համար խնդրի մեջ: Նա ուղղակի վրա տվեց:

- Դուք` նոր ազգերդ պետք է սովորեք հին ժողովուրդների օրինակի վրա, - կրկնեց նա, - որ *նախկին մեծ ու նախկին հռչակավոր ազգերի արդի ներկայացուցիչները բնական և անխուսափելի արդյունքն են արհեստական այն ընտրասերման, որը կատարվել է մի այնպիսի հասարակության մեջ, որը բանտարկում է քաջերին, արտաքսում ինքնատիպներին, ճնշում զանգվածին, խեղդում է ցեղի միջին մակարդակից ցանկացած տարբերություն և պաշտամունքացնում հեզին, միջակին, խորամանկին, նրբամիտին ու խնայասերին, որովհետև սրանք առևտրական առումով պիտանի են:* Արդի հույներն ուղղակի ժառանգներն են հելլենների և իրենց տհաճ հատկանիշներն այն տևական գծերն են, որ ծագում են հին հունական մշակույթից, ինչպես իրականում կենսագործում էին հին հույները: Ո՛չ այնպես, ինչպես մեծ, բացառիկ հույները խոսում, երգում ու կերտում էին այդ մշակույթը, այլ հենց այնպես, ինչպես միջին հույները կենսագործում էին գործարարությամբ, ուզում եմ ասել` այն հույները, որոնց Սոկրատեսին մահվան դատապարտեցին: Արդի եգիպտացիները, ինչպիսիք ժառանգել ենք բրիտանացիներս, եգիպտական մշակույթի ամենահեռո՜ւ-հեռավոր փոքր ծոռներն են, իրենց ապուպապերի երեխայանման աշխատանքով այնքան գեղեցկորեն

կերտված Սֆինքսի հանելուկին ուշացած պատասխանը: Այսօրվա արաբը հին, փառավոր Արաբիայի արվեստներից, բարքերից, գործարարությունից զուրկ է. նա անապատի փոշին է...

Նա կանգնեցրեց իմ մի նոր առարկությունը՝ կանխելով.

- Հնադարյան հույները, նաև եգիպտացիները, սիրիացիները, վերջապես թուրքերը և մյուսները՝ նրանք էլ իրենց հանճարներն ունեին, իրենց բանաստեղծներն ու արվեստագետները, իրենց զորավարները, որոնք հետամնաց ժողովուրդներ էին նվաճում, ունեին իրենց արդյունաբերական ղեկավարները, որոնք աշխատանքով էին ապահովում, իրենց սեփական աշխատուժն էլ ունեին: Բայց ընտրասերյալները, ազնվապետությունները, հարստապետությունները չհարատևեցին: Նրանց հետնորդները ժառանգորդներ չեղան, չվերապրեցին նույնիսկ: Հաջողակների, հարուստների, հզորների, առանձնաշնորհյալների զավակները գողի ծոցը գնացին, և նույնը լինելու է ձեզ մոտ: Եվ աշխատուժի էլ հաջորդական սերունդները, աշխատանքով գերծանրաբեռնված, թերսնված, վիատված և խիստ կարգկանոնի ենթարկված, բութ ստրուկների վերածված, մեռան կամ ոչնչացվեցին: Պարզվեց ու պարզվում է, որ *միջին դասակարգն է ունակ վերապրելու* այդ կերպ կազմակերպված հասարակության մեջ, այդ ստոր միջին դասակարգը: Ուստի ամբողջ հին աշխարհին այժմ տեսնում եք, փաստորեն, միայն բիզնեսմեններով բնակված, մանր բիզնեսմեններով՝ վաճառականներ, առևտրականներ, խանութպաններ, վաշխառուներ, փերեզակներ, ո՛չ արտադրողներ: Նրանք զբաղված են գնել-ծախելով. ու սերված լինելով գնող-ծախողներից, առևտրական մրցակցության բազում սերունդների միջով ընտրասերվելով՝ նրանք լավ գնող-ծախողներ են: Կարող են գնալ աշխարհում որևէ տեղ առևտուր անելու, բայց ո՛չ ստեղծելու, ո՛չ կազմակերպելու, կառուցելու, ծրագրելու և աշխատելու: Նրանց այն եղբայրները, որոնք այս բաներն էին անում, անզավակ մեռյալներ են: Ո՛չ, միայն ամենազուտ, ամենախորամանկ առևտրականներն են ապրում, և նրա՛նց ենք գտնում ամեն տեղ, նրանք սողոսկում-թափանցում են ամենուր: Մեր գաղութներում, Հարավային Ամերիկայում ես հանդիպել եմ արաբների, որոնք փերեզակություն են անում, առևտուր են անում, հարստանում են: Իսկ ինչ վերաբերում է սիրիացիներին, հույներին, հայերին...

- Եվ հրեաներին, - հուշեցի: Անտեսեց:

- Իմ այս հին ժողովուրդները, - ասաց, կգնան ցանկացած տեղ, ուր աշխատավորներ կան աշխատեցնելու, խորամանկորեն կխիզախեն՝ հեզորեն տառապելով, դրամ խնայելով, *գործ անելով:* Այո՛, նրանք *գործ* են անում: *Այնպես են գործ անում, որ աշխատավորն այդպես չի աշխատի:* Այնպես են գործ անում, ինչպես բիզնեսմենը միայն կանի՝ հարատևորեն, համառորեն, մնալով հենց միայն շահի նեղ լուսանցքում: Բայց,- շեշտեց նա, - չե՛ն աշխատի նրանք: Չե՛ն կարող: Չեն կարող հասկանալ «աշխատավարձի համար աշխատելու» դրույթը: Դա բնազդ է նրանց մեջ, մի գիծ, մի ուշիմություն, որ զարգացվել է հաջողված ընտրասերումով, ինչպես որսորդության ուրույն գծեր ենք զարգացնում որսկան շների այս կամ այն ցեղի մեջ: *Նրանք իրենց արյան մեջ իսկ գիտեն, որ աշխատավարձով, նույնիսկ բարձր աշխատավարձով աշխատելն անօգուտ է, եթե ուզում ես հաջողության հասնել ու հարստանալ:* Ոչինչ չկա, ոչինչ չի կարող լինել աշխատավարձի որևէ հնարավոր բարձրության մեջ՝ ո՛չ շահույթ, ո՛չ դրամագլուխ, ո՛չ բաղադրյալ առաջատվություն: Նրանք չեն էլ խոսում դրա մասին, դա շատ ակնհայտ է նրանց համար, դա նրանց կյանքն է: *Նրանք խելոք են, ինչպես հին մի ցեղ կարող է խելոք լինել՝ որսալու խաղին պատրաստ:* Քոթոթի իրենց աչքերը բանալու պահից արդեն տեսնում են արարող աշխատանքի անհեթեթությունը: *Անելիքը՝ միայն դիտել ու սպասելն է մինչև հարստությունն արտադրվի, ու հետո, մի կերպ, արտադրողից այն ձեռք բերելը:* Եվ նրանք գիտեն՝ ինչ կերպ անեն այդ բանը, ինչպես կենդանին գիտե իր կենդանական գործը և բույսն էլ գիտե իր բուսական գործը՝ բնազդով: *Ուստի կզբաղվեն բժշկությամբ, իրավաբանությամբ, ցանկացած այլ մասնագիտությամբ էլ, որ բիզնեսի նման ձեռք է բերում այս կամ այն շահաբաժինը հասարակական ընդհանուր հարստության ավարտված, վերջնական, դրոշմված ձևից, երբ հասարակ ժողովուրդն արդեն ստեղծել է այդ հարստությունը:* Իսկ դուրս գալ ու ճակատի քրտինքով արդյունահանել երկրի հումքը և մշակելով վերածել շուկայական ապրանքների՝ ոչ: *Հին ժողովուրդները չեն հանդուրժում անել այդ բանը, իսկ ինչ վերաբերում է ձեր հայերին՝ նրանք պարզապես չե՛ն անի:*

Լռեց մի պահ, դիտելով ինձ, ու երբ տեսավ, որ ինքս չեմ դիտում իրեն, իր պրոպագանդի սլաքներից դեռ մի քիչ էլ արձակեց ինձ վրա:

- Հայերը, - ասաց, - ամենախելացի, ամենակատարյալ ընտրասերված, ամենաբարձր զարգացած ցեղն են աշխարհում՝ քաղաքակրթվածության տեսակետից:

Ես կրկին տվի իմ թեկնածուի անունը:

- Հրեանե՞րը, - արձագանքեց: - Առաջ էլ ասացիք նրանց մասին, և ես գոհ զգացի: Դա ցույց տվեց, որ գեթ մի նշույլ ընկալում եք հին ցեղերի մասին իմ ասել ուզածից: Քիչ ճամփաներ անցած մարդու համար հրեաներն ամենածանոթ օրինակն են հին, խորաթափանց, խելացի ժողովրդի, և այո՛, նրանք բնազդորեն շահագործողներ են: Նրանք հակված են վաշխառության: Բայց նրանք կաշխատեն: Չեն հանդուրժում, բայց կարելի է նրանց աշխատեցնել: Եվ ավելի վատ, որ նրանք ստեղծագործող էլ են, հնարամիտ ու սենտիմենտալ: Նրանց մեջ դեռ կան արվեստագետներ, փիլիսոփաներ, մարգարեներ: Անկատար են նրանք: Քաղաքակրթության անավարտ մի արդյունքն են, կիսատ մնացած: Ես հասկանում եմ, թե ինչու իրենց հանդեպ վախ ու ատելություն են հարուցում նրանք. ունեն ցեղային տարեցության որոշ իմացական գերազանցություն: Բայց անհեթեթ է նրանց նույն ոգով դասել այն հին ժողովուրդների հետ, որոնց մասին խոսում եմ: Չէ՞ որ իմ հին ցեղերն իրենց երկրից դուրս են քշել ձեր այդ հրեաներին կամ չեն թողել, որ *գործ անեն* իրենց մոտ: Նրանք չեն կարող ապրել արաբների, սիրիացիների, եգիպտացիների վզին: Իրենց լավ են զգում Անգլիայում, հարստանում են Ֆրանսիայում ու Գերմանիայում և անշուշտ՝ Միացյալ Նահանգներում. այո՛, այո՛, նրա՛նք: Բայց չինացիները, օրինակ, չինացիները կուլ են տալիս հրեաներին, ինչպես կետ ձուկը փոքր ձկներին: Մեր շոտլանդացիները ողջ-ողջ քերթում են նրանց: Այդպես են անում արաբներն էլ, թուրքերը, հույները, իսկ ինչ վերաբերում է հայերին...

Շունչ քաշելով, շարունակեց.

- Հրեաներն իրենք այնպես են զգում հայերի հանդեպ, ինչպես հակասեմական եվրոպացիները հրեաների հանդեպ են զգում. ճիշտ նույն կերպ էլ հույները, թուրքերը և բոլոր այն մյուս ցեղերը, որոնք երբևէ գործ են ունեցել հայերի հետ: Զգում են, որ հայերը բոլորին էլ աշխատանքի կլծեին: Ու կլծեն: Հայերն ունեն հրեաների բոլոր հատկանիշները, առավել՝ բոլոր մյուս ցեղերի էլ բոլոր հատկանիշները, և բացի այդ՝ քրիստոնյաներ են:

Կանգ առավ, ոչ թե ասելիքի համար բառեր գտնելու, կրթված անգլիացին, ենթադրում եմ, լավ գիտի անգլերենը: Ավելի ճիշտ՝ կարծես խուսափում էր իր եզրակացությունն ասելուց, նախընտրելով ինձ ստիպել, որ ինքս բռնեմ իր եզրակացությունը, քան թե իր բերանից մեջբերեմ: Ու քանի որ խայծը չէի կլլել, նա տաղտկալիորեն շարունակեց՝ ևս մի պատեհություն տալու ինձ:

- Հայերը,- ասաց,- չպետք է ունենան Հայաստանը, բուն երկիրը: Իրենք չեն աշխատի, որ մշակեն երկիրը, նույնիսկ ոչ իսկ հօգուտ իրենց: *Ուզում են այդ հողերը, այո, բայց միայն սեփականատերը լինելու համար:* Մինչև իսկ զարգացման գործը կազմակերպելու համար չեն աշխատի նրանք: Արտոնագրությամբ վարձու կտան ուրիշներին՝ գործը վարելու: *Նրանք ուզում են ապրել ծովեզրին, քաղաքներում՝ ի հաշիվ ստացած վարձի շահույթի, շահաբաժինների, արժեթղթեր առնել-ծախելով ձեռք բերված շահի և դրամագլխով ու աշխատուժի կիրառմամբ վաստակված դրամի:*

- Շատ մարդիկ կան այդպես, - ասացի:

- Միայն հայերը չեն:

- Տեսնում եմ, որ դուք դեռ չեք ըմբռնում բուն խնդիրը, - ասաց նա: - Իրոք, ուրիշներ էլ կան, որ կուզենային այդպես անել: Ֆրանսիական բուրժուազիան այդ ուղղությամբ է շարժվում, ու մեր անգլիացիներն էլ գալիս են դրան, մանավանդ մեր այսպես կոչված բարձր դասի այն դժգոհները, որոնք գնում են գաղութներ կառավարելու, բայց ինքնամփոփվում են՝ իրենց համար «Փոքր Անգլիա» ստեղծելով տեղում: Նրանք կուզենային ոչինչ չանել, բայց չեն կարող: *Անվնաս են նրանք:* Կուզենային ոչինչ չանել, բայց ծախսել: Ու ծախսում են իրոք, հասկանում եք: Նույնիսկ ձեր հրեաները ծախսող են, սքանչելի ծախսող: *Բայց ձեր այդ հայերը ոչինչ չեն անի ու չեն էլ ծախսի: Ձեռք են բերում ու խնայում:* Վաճառում են, բայց միայն կրկին գնելու և ավելի ու ավելի ձեռք բերելու համար: *Դարերով բնաշրջություն է պետք՝ իսկական առևտրական ոգու այդպիսի կատարելություն զարգացնելու համար,* իսկ բնաշրջությունն աստիճան առ աստիճան զարգացման խնդիր է: Ու հայերն ամենաբարձր աստիճանին են հասել: *Ասում եմ ձեզ, որ եթե հայերին առիթ տրվի մի կարգին թռիչք առնելու աշխարհում, եթե նրանք ազատ իշխանություն ձեռք բերեն երկրագնդի որևէ անկյունում, ամբողջ մոլորակի տերը կդառնան և կաշխատեցնեն մնացյալ ամբողջ մարդկությանը:* Ա՛յդ է, որ գիտեն թուրքերը և սարսափում են, և հույներն էլ և... մենք բոլորս, որ գիտենք նրանց: Ուրեմն...

Նա կրկին ինձ վրա էր գցում, որ ասեմ եզրակացությունը, բայց ես չէի ուզում ասել: Ուստի խթանեցի նրան.

- Ուրեմն... - ասացի:

- Ուրեմն, - պոչը թեքեց նա, ինչպես ամերիկացիներս ենք ասում կոպտորեն, - ուրեմն պետք է բաժանենք նրանց՝ *Հայաստանի վրա մի մանդատ, հայերի վրա՝ ուրիշ մանդատ:*

- Ուրեմն, - դիմադարձեցի ես, - դուք ուզում եք, որ Հայաստանը տրվի ձեր մի դաշնակ-

ցին, բրիտանական կապիտալի մի գործակցին, իսկ հայերը տրվեն մեզ՝ ամերիկացիներիս: Շատ լավ: Երկու հարց է ծագում: Ձեր դաշնակիցը ի՞նչ կարող է անել Հայաստանում առանց աշխատուժի: Ու վերջապես ի՞նչ կարող ենք անել ամերիկացիներս հայերի հետ առանց Հայաստանի:

- Օ՜, - ասաց, - ուրիշ ժողովուրդներ կան Բալկաններում, Փոքր Ասիայում, Հնդկաստանում և Աֆրիկայում, հետամնաց ազգեր, իսկապես հետամնաց. ազգեր, որոնք աշխատուժ կարող են լինել: *Նրանց կարելի է բերել Հայաստան և աշխատանքի լծել: Աշխատուժի պակաս չկա:*[3]

- Ուրեմն դա կլուծի բրիտանական, գործնական խնդիրը, - ասացի: - Գանք իդեալիստական՝ ամերիկյան խնդրին: Ի՞նչ պետք է անենք հայերի հետ:

Չէր ուզում ասել: Իր բրիտանական հումորը կամ իր դիվանագիտական զգուշավորությունը և կամ չգիտեմ ինչը չէր թողնում նրան ասել: Խուսափելով խոսեց այն մասին, թե *ասիական աշխատուժի ու եվրոպական կապիտալի համար վտանգավոր է հայերի ներկայությունը որևէ այնպիսի վայրի մոտ, ուր հանքեր ու հողեր են մշակվում:*

- Ուրեմն, - ասացի ես, ոչ առանց մի քիչ (ամերիկյան) հումորի: - Ուրեմն...

Մի ստվեր անցավ աչքերում, բայց ոչ ձայնի մեջ: Կրկին զվարթորեն խոսեց «ամերիկյան իդեալիզմի» մասին: Հոգնել էի այդ բանը լսելով, սոսկալի ձանձրացել, բայց դրա մասին խոսել նա սիրում էր: Բայց այս անգամ մի քիչ փոխեց երգի բանալին: Երիտասարդ կոչեց ամերիկացիներիս, ասաց, որ մենք դեռ անփորձ ենք ուրիշ, ավելի հին ցեղեր ղեկավարելու մեջ: Եվ ուրեմն, անտարակույս, հակված ենք խստորեն դատելու բրիտանացիների և այլ գործնական կառավարիչների գաղութային վարմունքը, որոնց ամենախղճմիտ գործակալն անգամ երբեմն անհրաժեշտ էր գտնում սպանել կամ ուրիշ կերպ Աստծո վախը ներշնչել ենթակա մի ժողովրդի փոքրամասնությանը՝ մեծամասնության ընդհանուր շահի և ներդրված կապիտալի ապահովության համար:

- Դուք չեք գիտակցում, - եզրակացրեց նա, - թե որքան դժվար ու նրբին խնդիր է մի տարօրինակ, մի օտար ժողովուրդ կառավարելը:

- Սխալվում եք,- ջղագրգռված ասացի ես ու կրկնեցի մեղադրանքս, թե նա չգիտե մեզ:- Դուք նույնքան անտեղյակ եք իմ ժողովրդի մասին,- հայտարարեցի,- որքան ասում եք, որ մենք ենք անտեղյակ եվրոպացիների, թուրքերի, հայերի և մյուսների մասին:

Ի ցույց բերեցի Ֆիլիպինները, Կուբան, Սանդվիչյան կղզիները, բոլոր այն օտար երկրները, որ կառավարում ենք հաջողությամբ: Ու հիշեցրի նրան, որ ամեն տեսակ օտարականներ ունենք հենց մե՛ր մեջ: Առանց պատճառի չէ, որ Միացյալ Նահանգները ձուլարան են կոչել: Ինչ օտարականներ ասես չունենք այնտեղ: Նույնիսկ նրա հայերին ենք աշխատեցրել: Պնդեցի, որ մենք էլ մեր դժվար գործն ենք արել, ինչպես որևէ կառավարություն երկրագնդի երեսին՝ չբացառելով բրիտանացիներին էլ: Եվ համոզելու համար նրան, որ մենք գործնական ենք, պատմեցի, թե տեսել եմ՝ ինչ է արվել օտար աշխատուժի նկատմամբ մեր Նոր Անգլիա նահանգներում, հարավային նահանգներում, մեր արևմուտքում և ամենուրեք: Բայց պատահեց, որ հիշատակեցի նաև մեր սեփական բնիկներին՝ ամերիկյան հնդկացիներին:

Հենց դրա վրա էլ նա ուղղակի վեր թռավ: - Ա՛յդ է ահա, - գոչեց: - Ա՛յդ էր իմ մտքում ամբողջ ժամանակ: Ձեր հնդկացիների հանդեպ ձեր քաղաքականությունն այն է, ինչ պետք է հայերի հանդեպ:

Անակնկալի եկա, շշմեցի: Հարցրի, թե իր կարծիքով ի՞նչ է եղել մեր քաղաքականությունը հնդկացիների հանդեպ: Եվ նա ասաց, թե իր հասկացածով՝ մենք ոչնչացրել ենք նրանց բոլորին էլ... բո՛-լո՛-րի՛ն: Այնպես չէ՞:

Ես նայեցի նրան ոտից գլուխ, ինչպես ինքն էր ինձ նայել մի քանի անգամ: Ու հաճույքով այդպես նայեցի:

- Այդպես ուրեմն, - ասացի մի երկար դադարից հետո, - ուրեմն դուք մտածում եք՝ ա՛յդ է, որ պետք է հայերին անենք... պետք է ոչնչացնենք նրանց բոլորին էլ, գլխովին:

- Ոչ, ոչ, ոչ, - ուղղեց նա: - Ինչպե՞ս եք դուք՝ լրագրողներդ սխալ հասկանում և սխալ մեջբերում:

Բոլորովին էլ չէր ուզում ասել, թե մենք պետք է կոտորածն ընդունենք որպես քաղաքականություն: Գիտեր, որ չենք անի, չենք կարող անել դա:

Դե լավ, ի՞նչ էր ուզում ասել, ուրեմն: Ի՞նչ պետք է անենք: Չասաց: Իրենք իրենց շուրջ պտտվող մի զույգ դերվիշների նման պտտվեց ու պտտվեց կլոր-կլոր: Հոգնեցուցիչ էր: Բայց ի վերջո հասկացա: Պետք է ինքս ասեի իր ասել ուզածը, երևի ա՞յդ էր ճիշտը: Չուղղեց ինձ:

Որոշակիորեն ու հստակորեն չէր ուզում ասել, թե մենք պետք է գիտակցորեն ու մտածված կերպով գնանք բնաջնջելու հայերին: Բոլորովին ոչ: Պարզապես հույս ուներ կամ հավատում էր, որ ուրիշ ամեն ինչ փորձելուց *հետո*՝ մենք պետք է *հարցը վերջացնենք* այդ Բանն անելով: Ու նաև *հիմնավոր անելով:* Չթողնելով ոչ մի Ադամ ու Եվա, որ չշարունակեն Կայեն աճեցնել...

- Բայց դա սկանդալ չի՞ դառնա, - ասացի:

Կարծում էր՝ ոչ: Հիշեցրեց, որ մենք այնքան գաղափարապաշտ ենք եւ այնպիսի համբավ ենք վայելում մեր մարդասիրության համար, որ թվում է՝ ի զորու ենք որևէ բան անելու բանականության սահմաններում՝ առանց կորցնելու մեր իդեալիզմը կամ մեր բարի անունը:

-Հնդկացիների հանդեպ ձեր քաղաքականության մեջ խայտառակություն չկար, այնպես չէ՞, - հարցրեց: - Ու երբեք էլ չեք դադարել մտածելուց, թե ձեր արածը ճիշտ էր, այո՞: Նվաճել եք Մեքսիկայի մի մասը, գրավել Հավայան կղզիները, զենքի ուժով Իսպանիայից խլել եք Ֆիլիպինները և Պուերտո Ռիկոն, ազատագրել եք Կուբան և գրավ եք դրել դրա վրա, գնել եք Դանիական կղզիները, ձեր ծովային հետևակազորը ափ եք հանել Կենտրոնական Ամերիկայում և զորքը մտցել այնտեղ: Շուտով ստիպված եք լինելու վերականգնել կարգ ու կանոնը միացյալ Մեքսիկայում: Եվ սակայն, - ասաց նա, կարծես հիացմունքով, - դուք դեռ կողմ եք փոքր ազգերի ինքնորոշմանը: Դուք փոքր կայսրություն եք, իսկ մեզ զգուշացրել եք ձեր Մոնրոյի դոկտրինով, որ երբ պատրաստ լինեք՝ մեծ կայսրություն եք դառնալու: Եվ սակայն դուք հակաիմպերիալիստներ եք: Հենց նոր պատերազմ մղեցիք գերմանական իմպերիալիզմի դեմ, և...

- Դուք էլ, - արձակեցի կրակոցս:

- Օ՜հ, դա տարբեր է, - հակադարձեց նա իմ կրակոցը: - Մենք իմպերիալիստներ ենք: Մենք մեզ անկեղծորեն կայսրություն ենք կոչում և պարկեշտորեն կռվեցինք մեր կայսրության համար գերմանացու կայսրության դեմ: Իսկ դուք՝ դուք կռվեցիք կայսրության դեմ հօգուտ ինքնորոշման:

Կար մի կետ դրա մեջ, և զգացի՝ նա չարախնդորեն սպասում էր, որ դիմակայեմ դրան: Բայց հենց ուղղակի չէի կարող այդպիսի վայրկյանին, ու երբ չպատասխանեցի, նա շարունակեց.

- Ես կարծում եմ, որ դուք՝ ամերիկացիներդ կարող եք որևէ բան անել ու տարակուսանքի չենթարկվել ո՛չ աշխարհի, ո՛չ էլ ինքներդ ձեր կողմից: Մի սքանչելի բան կա դրա մեջ, շատ սքանչելի, աշխարհի համար օգտակար մի բան: Դա թույլ է տալիս մտածել, որ ամերիկացիներդ բուն Հայաստանում կարող էիք հիմնավորապես անել ու վստահաբար կանեիք այն, ինչ պետք է արվի այնտեղ: Կանեիք աստիճանաբար, բայց կատարելապես, առանց բաց թողնելու որևէ մի առանձին կամ, ավելի ճիշտ, ամուսնացած հայի, և այդ ամբողջը առանց խայտառակության, առանց նվազագույնս խախտելու ձեր այն հավատքը, թե դուք ... ինչպե՞ս ասեմ ... դե՛հ, դուք նման չեք մեզ՝ անգլիացիներիս կամ ֆրանսիացիներին, գերմանացիներին, թուրքերին և, վախենամ, դույզն-իսկ նման չեք հայերին էլ: Եվ, - շտապեց ավելացնել նա, - *պետք է որևէ մեկը լուծի հայկական հարցը:* Ինձ թվում է բանաստեղծական արդարություն կլինի, լավ քաղաքականություն և հաստատ գործ, որ աշխարհում ամենաիդեալիստ ժողովուրդն իր վրա վերցնի աշխարհի ամենագործնական ժողովրդին:

Ի՞նչ էր նա թելադրում ինձ: Բրիտանական հումո՞ր էր սա: Նայեցի նրան խիստ-խիստ: Աչքն էլ չթարթեց: Նստել էր այդ փքված տեսքով, որ նկատել էի առաջ, բայց, չէ՜, մկան չի շարժվում դեմքին: Ծանր բան է անգլիացու հետ հարցազրույցը, և վտանգավոր: Հիշեցի, որ ասաց՝ ժխտելու է հարցազրույցը, եթե ամենաթեթև իսկ առարկություն լինի: Որոշեցի հենց ուղղակի փորձել նրան:

- Ինչպես հասկանում եմ, - ասացի, - ամերիկացիներս առևտրական մշակույթ ենք, ինչպես հայերն են, ինչպես բոլոր այս հին ազգերն էլ, որոնց պետք է ոչնչացնել:

Նա գլխով արեց: Ես շարունակեցի.

- Նրանք մտածում էին, որ զարգացնում են գործարարությունը, երբ իրականում զարգացնում էին մարդկային ցեղի մի որոշ տեսակ՝ մի ուրույն ցեղ գործարար մարդկանց, որ կախյալ են ուրիշների արտադրողական աշխատանքից, ուրիշների, որոնց նրանք չեն կառավարում հիմա, և որոնք ատում են նրանց, որովհետև նրանք կարող են որևէ մեկին մատի վրա խաղացնել առևտրի մեջ և ապրում են առանց աշխատելու, ստախոսներ են, *չարաշահողներ, մակաբույծներ՝ ամենագործնական ուղեղով և ամենաքրիստոնեական իդեալներով ու վարվելակերպով:*

- Դուք՝ ամերիկացիներդ լավ եք խոսում,- ասաց նա: - Չեք կարող գտնել ոչ մի անգլիացու, որ այդքան հստակորեն բանաձևեր որևէ այդպիսի բան:

- Եթե ամերիկացիներս կարողանայինք այժմ, մեր ներկա դրությամբ, այս տեսակ մարդու զարգացման նախնական փուլում, եթե կարողանայինք, կառավարելով հայերին, մոտիկից տեսնել մեր մշակույթի կիրառման գործնական ձևերն ու արդյունքները, եթե կարողանայինք հասկանալ, որ այն, ինչ ստուգում ու քննում ենք ներկա հայի մեջ, ապագա ամերիկացին է...

- Վաղվա, - շտկեց նա:

- Ապա ուրեմն, - շարունակեցի ես, - գուցե հուսախաբ լինեինք հայերից, գուցե, ջղայնացած, ոչնչացնեինք նրանց բոլորին...

- Ահա, ահա:

- Գուցե ոչնչացնեինք բոլոր հայերին, բայց պիտի տուն գնայինք...

- Հեռագրեիք, - հուշեց նա, - ավելի արագ է դա:

- Հեռագրեինք տուն, - ընդունեցի փորձի համար, - հեռագրեինք զգույշ լինելու մի ահազանգ. «Զգուշացեք գործնական բիզնեսի հետ քրիստոնեական իդեալիզմի խաչաձևումից»: Չափից շատ բիզնեսը և չափից շատ իդեալիզմը կարող են վնասել այս երկու լավ բաներին ու մեզ էլ՝ որպես ժողովրդի:

- Ահա՛, ահա՛, - բացականչեց:

- Դա կարող էր մեծ, հարուստ Ամերիկան վերածել մի Հայաստանի, որը ապագայի բրիտանացիներն ու ռուսները պիտի «անհրաժեշտ» գտնեին վերցնելու որպես մանդատային՝ երկու մասի բաժանված, մեկը՝ բուն իսկ Միացյալ Նահանգները, Անգլիայի համար, մյուսը՝ ամերիկյան ժողովուրդը՝ Ռուսաստանի համար:

Նա լուռ մնաց: Սպասեցի տեսնելու, թե որևէ չափով զգու՞մ է ամերիկյան հումորը: Նա էլ մի պահ սպասեց ու հետո, տեսնելով, որ մի բան եմ ակնկալում, խոսեց:

- Ձեր այդ գաղափարը... - սկսեց:

- Ի՞մ գաղափա՞րը, - պայթեցի ես:

- Այո,- ասաց: - Դա մի գաղափար է: Լավ գաղափար է, լավ է տեսականորեն, բայց... էությամբ իդեալիստական է: Ես նկատի ունեմ գործնականը: Հավատո՞ւմ եք իրոք, որ հայերին կառավարող ամերիկացիք բավական գիտակից կլինեն տեսնելու համար, որ հայերը նման են ամերիկացիներին:

- Դուք՝ անգլիացիներդ տեսնում եք, - կըտրուկ նետեցի երեսին:

- Ճիշտ է, - համաձայնեց նա մտածկոտ: - Մենք տեսնում ենք հայերի նշանակությունը ամերիկացիների համար, մենք՝ իմպերիալիստ անգլիացիներս տեսնում ենք դա: Բայց վստահ չեմ ու *մտածում եմ՝ կարելի՞ է արդյոք մեր, այսպես կոչված, բարձր դասի դժգոհներին բերել այն գիտակցության, որ կանխատեսեն իրենց ճակատագիրը այն հին ազգերի ճակատագրի մեջ, որոնց կառավարում են:*

Ես պարտված էի, անօգնական, շշմած: Բարեբախտաբար նա չտեսավ իմ վիճակը: Աչքերը խոնարհվել էին: Վեր կացավ. խորը մտածմունքի մեջ էր, երբ ինձ առաջնորդում էր դեպի դուռը: Այնտեղ աչքերը բարձրացրեց:

- Գնաք բարով, - ասաց, - ես հավանում եմ ձեր տեսությունը: Գայթակղիչ է: Վախենամ՝ թե գործնականում դա չաշխատի, բայց գրեցեք դրա մասին: Թելադրական է: Զգույշ գրեցեք, ոչ շատ հստակ և, իմիջիայլոց, մի՛ մեջբերեք ինձ: Ես ոչինչ չեմ ասել, ոչինչ...

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Այս և հետագա ընդգծումները մերն են - խմբ.:

2. Հարցազրույցն արվել է 1919 թ., երբ արևմտահայությունն արդեն իսկ ցեղասպանված էր, իսկ Հայաստանի Առաջին Հանրապետությունն ընդամենը 1 տարի առաջ՝ Առաջին աշխարհամարտում Անտանտի դաշնակիցն էր, իսկ այդ պահին՝ բոլշևիկյան Ռուսաստանի դեմ՝ Եվրոպայի դաշնակիցը, ի տարբերություն Թուրքիայի:

3. Սա մի տեսական դրույթ է, որ Արևմտյան Հայաստանի հայազրկված տարածքներում գործնականում փորձեց կիրառել Մուստաֆա Քեմալը՝ Բալկաններից բերված մահմեդականների միջոցով, սակայն առանց շոշափելի արդյունքի. թեև երբեք պետք չէ բացառել, որ նման մոտեցում կկամենան որդեգրել նորից՝ այս անգամ՝ Արևելահայաստանի փոքրիկ մեր հատվածում:

Հ. Գ. 1919-ին արված և 1931-ին հրատարակված հարցազրույց է անգլիացի առեղծվածային հետախույզ Լոուրենս Արաբիացու հետ: Հայ իրականության մեջ այս հարցազրույցի մասին հիշատակումն սկսվել է 1990-ականների սկզբից. տպագրվել է ռուսալեզու մամուլում, ինչպես նաև հայերեն՝ «Ազգ» օրաթերթում: Հաշվի առնելով նյութի խորքում թաքնված բազմաթիվ իրողություններ և մոտ 100 տարի առաջվա և մեր օրերի քաղաքական զարգացումների տրամաբանության նույնականությունը՝ այն հասցեագրում ենք պետականության արժեքն իրապես գիտակցող քաղաքացիներին, ինչպես նաև դեռևս ռոմանտիզմի մեջ խարխափող լայն հասարակությանը:

«ՆՈՒՅՆԻՍԿ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆ Է ԵՆԹԱՐԿՎՈՒՄ ԳՐՈՂԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆԸ»

Ապրիլի 12-ից 19-ը՝ ուղիղ մեկ շաբաթ, Հայաստանում էր գտնվում աշխարհահռչակ գրող Անդրեյ Բիտովը «Հրանտ Մաթևոսյան» բարեգործական-մշակութային հիմնադրամի հրավերով՝ Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության աջակցությամբ: Բիտովի այցի հիմնական նպատակն էր՝ լինել ընկերոջ՝ Հրանտ Մաթևոսյանի ծննդավայր Ահնիձորում և այնտեղ երկու մայրի տնկել՝ իր և Հրանտ Մաթևոսյանի համար: ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը Բիտովի հետ հանդիպման ընթացքում, ի թիվս այլ հարցերի, քննարկել է նաև Հրանտ Մաթևոսյանի հոբելյանի՝ 75-ամյակի նախապատրաստության հետ կապված ծրագրերը, ինչպես նաև Գրականության պուրակի հիմնադրմանը, մշակութային բնապահպանական արգելոցին վերաբերող հարցեր: Որոշվել է նաև հրատարակել Բիտովի «Հայաստանի դասեր» ստեղծագործությունը՝ հայերեն, անգլերեն, գերմաներեն և ֆրանսերեն թարգմանությամբ:

Հայաստանում գտնվելու օրերին Բիտովը Երևանի պետական համալսարանում հանդիպեց ուսանողներին, դասախոսներին և, առհասարակ, մտավորականությանը: Ապա եղավ Սլավոնական համալսարանում, որտեղ կայացավ Բիտովի «Ապրելու մտադրություն» գրքի հայերեն թարգմանության շնորհանդեսը: Հենց այստեղ էլ Բիտովը ռուսական երիտասարդական երաժշտախմբի նվագակցությամբ արտասանեց իր իսկ բանաստեղծությունները՝ նվիրված Ավագ շաբաթին:

Բիտովը հյուրընկալվեց նաև Հայաստանի գրողների միությունում, որտեղ համբերատար պատասխանեց հայ գրողներին հուզող բոլոր հարցերին:

Ահնիձորում արդեն հասկացա, որ Բիտովից ստացած տպավորություններս ստիպելու են վերաարժևորել աշխարհը, երևույթներն ու իրերն ընկալել նոր չափանիշներով: Ոչ միայն ինձ են ստիպելու: Ես ու իմ սերունդը շատ ենք լսել «գրական միջավայր» կոչվածի չգոյության մասին: Անկեղծ ասած, չենք էլ պատկերացրել, թե ինչ է նշանակում «գրական միջավայր» ասվածը: Միայն լսել ենք, որ այն չկա ու վերջ: «Գրական միջավայր». մի տեսակ շատ արհեստական է հնչում, և ես միշտ ուրախացել եմ, որ այն չկա:

«Դուք ծանո՞թ եք Հայաստանում ընթացող գրական պրոցեսներին», Բիտովին Ահնիձորում հարց ուղղեց լրագրողներից մեկը. «Գրականության պրոցես չկա: Պրոցեսները լինում են դատական, իսկ գրականության մեջ նման հասկացություն չկա: Ինչ-որ ժամանակ, ինչ-որ տեղում, բոլորից անհայտ Հրանտը՝ նստած գրել է: Այդ ժամանակ մենք ու բոլորս նրան չգիտեինք, հետո իմացանք: Սա է գրականության՝ ձեր ասած պրոցեսը: Մեկը նստում է, գրում... հետո այն դառնում է գրականություն, կամ չի դառնում»:

Այսպես էլ ապրում ենք ու այսպես էլ ժամանակի մեջ ծնվում է (կամ չի ծնվում) գրականությունը: Ու հետո գալիս է իշխանության ժամանակը՝ գրողի իշխանության: Ահնիձորում Բիտովի խմած կենացներից մեկն էլ հենց սրան էր վերաբերում: Եվ նա ասաց. «Քանի դեռ ես վերջնականապես չեմ հիմարացել և չեմ դարձել առավել իմաստուն, ճիշտ ժամանակն է, մի բան պատմելու: Հեռուստատեսությամբ ցուցադրվում է մի հաղորդում՝ «Ուրիշ նորություններ». այստեղ քաղաքականություն չկա: Այս հեռուստահաղորդումը շատ լավ խմբագիր ունի, որը հաղորդումներից մեկի ժամանակ ասաց. «Պետք է բոլոր ատամները տեղում լինեն, պետք է ծամել բոլոր ատամներով՝ մանրամասն և ցանկալի է կոշտ սնունդ»: Հենց այդ ժամանակ ես գնում էի ատամնաբուժարան՝ բժշկի մոտ:

Այսօր ես պահքի մեջ եմ՝ մեզ մոտ Ավագ շաբաթն է, և չի կարելի միս ուտել, բայց ես կերա, որովհետև իմ հիշողությունը կարճ է: Ես ուզում եմ մի բան ասել երկար և կարճ հիշողությունների մասին: Ամենաերկար հիշողությունը, որն այստեղ կա (բացի պեյզաժից), այս տունն է, որը չի մոռացվել: Հիշում են, թե այն ում է պատկանում, ով է այստեղ ապրել: Պեյզաժը, սկզբունքորեն, ավելի երկար է պահպանվում հիշողության մեջ: Այդ ամենաերկար հիշողությունն այստեղ ձևավորել է, իհարկե, Հրանտը՝ իր ձեռագրերով, ապա՝ գրքերով: Այդ երկար հիշողությունը չի կարող պահպանվել առանց կարճ հիշողության: Եվ ահա այդ կարճ հիշողությունը, միևնույն է, ապրում է այս տան մեջ, որտեղ ծնվել են սկզբում Հրանտի ձեռագրերը, ապա՝ գրքերը: Սա շատ բարդ համադրում է՝ երկար և կարճ հիշողությունների:

Ի՞նչ է կարճ հիշողությունը. մենք նոր Թումանյանի մոտ էինք (նկատի ունի տուն-

Հանաքչի Եղոն

Լոռին զարմանալի մարդկանց պակաս չի ունեցել: Ամենքը յուրովի զարմանալի են: Զարմանալի մարդ է նաև Վարպետ Եղիան, որին ճանաչում են հանաքչի Եղո մականվամբ: Համեստ աշխատանքի ու վաստակի տեր մարդ է նա, ով իր փոքրիկ արհեստանոցում օրնիբուն երկրորդ կյանք է պարգևում իրենց դարն ապրած կոշիկներին ու գոհացնում մարդկանց: Ազատ պահեր էլ գտնում է՝ կատակելու, ստեղծագործելու: Նրա արհեստանոցում երեք «Լուրջ» բաներ կան. նորոգման պարագաները նյութեղեն են: ՀՅԿ անդամ է և պատին լրջորեն փակցրել է «Դավաճանել նախագահին, նշանակում է դավաճանել հայրենիքին» ցուցանակը: Մի այլ ցուցանակ ազդարարում է, որ վարպետը զոհված ազատամարտիկների ու որբ երեխաներով ընտանիքների համար աշխատում է անվճար: Մնացածը հումոր է, երգիծանք, կատակ:



Հարցրեք՝ ինչո՞ւ է ուշանում գարունը, կլսեք՝ էն ո՞ր գնացածն է ետ գալիս որ...

Բենզինո՞վ, թե՞ գազով է աշխատում Ջնջիլ Վաղոյի մեքենան:

- Ճշտով:
- Ո՞ր մարդն է խելացի:
- Ում մի կուռը շաշ է:
- Քանի՞ ձայն ստացավ թեկնածուն:
- 20 ձայն, 80 ոտնաձայն:

Երբեմն մարդիկ չեն կարողանում վճարել նորոգած կոշիկի համար: Ինքն իրեն մխիթարում է Եղոն.

«Կոշկակար եմ, կոշկակար,
կոշիկ կարեմ, արի տար,
Թե որ չունես դու ոչինչ,
մենակ «նիսյա» չասես ինձ»:

Համաշխարհային ճգնաժամի դեմ էլ է պայքարում մեր Եղոն.

Մեզ մոտ էլ հասավ էս ճգնաժամը,
զգույշ էինք մենք, գիտեինք ժամը:
- Իզուր ես եկել, այ դու ճգնաժամ,
գնա, ուրիշ տեղ տարածիր մահդ:
Համն էլ մի հանիր, գիտե՜նք քո համը,
մեր ազգն ի մի է՝ կքաշի գամդ:

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ
Լուսանկարը՝ Էմիլ ՅԱՎՐՅԱՆԻ

ՊԱՐԶՎՈՒՄ Է, ՈՐ...

Պատմաբանները չեն բացառում, որ Ռոբինզոն Կրուզոյի նախատիպի և Դանիել Դեֆոյի վեպի սյուժեի համար հիմք է ծառայել շոտլանդացի Ալեքսանդր Սելկիրկի կենսագրությունը: Նրա հետ գրողի հանդիպման մասին հավաստի տեղեկություններ չկան, սակայն անմարդաբնակ կղզում շոտլանդացի նավազի կյանքի մասին Դեֆոն, հավանաբար, գիտեր: 1704 թ. Սելկիրկը, Cinque Ports գալեոնի նավապետի հետ վիճաբանությունից հետո ափ էր իջեցվել խաղաղօվկիանոսյան Խուան Ֆերնանդես արշիպելագի ամայի կղզում՝ Չիլիից 640 կմ վրա, որտեղ նա ապրեց 4 տարի և 4 ամիս, մինչև որ պատահականորեն նրան գտավ ինչ-որ նավ: Սելկիրկի կյանքի մանրամասերն ուսումնասիրում են հնագետները: Նրանց արդեն հաջողվել է գտնել նավազի կացարանի մնացորդները, ինչպես նաև նավագնացության երկու սարք, որոնք նա հավանաբար վերցրել էր իր հետ՝ հուսալով ինքնուրույն նավարկել դեպի մարդաբնակ ափեր:

թանգարանը, որտեղ նա այցելել էր Դսեղի ճանապարհին-հեղ.). այնտեղ համադրված էր երկար և կարճ հիշողությունը՝ միաժամանակ: Նա ապրել է այդ տանը: Տունը, նրա հիշատակը, ժառանգությունը՝ պահպանվել են: Այսինքն՝ Թումանյանի տան շուրջ ստեղծված պեյզաժը պահպանվել է: Պահպանվել է պեյզաժը՝ շնորհիվ գրողի կոլորիտի: Պահպանվել է՝ շնորհիվ գրողի էկոլոգիական դերակատարման: Այսինքն՝ գրողը կամ բանաստեղծը չի ապրում միայն իր թողած տեքստով. նա ապրում է նաև կարճ հիշողության շնորհիվ, որը սկզբում կրում են նրա ժառանգները, հետո՝ նրա ընթերցողները: Եվ, իմիջիայլոց, հենց այսպես էլ ծնվում է իշխանությունը: Գրողի իշխանությունը: Հանկարծ, ամեն ինչից անկախ, ստեղծվում է այդ իշխանությունը, և միայն այդ ժամանակ է, որ դու հասկանում ես այդ կարճ հիշողության դերակատարությունը: Կարճ հիշողության հաղթանակ՝ երկարի նկատմամբ. ես սրա կողմնակիցն եմ, որովհետև եթե չլինի կարճ հիշողությունը, ապա դրանից չի ծնվի երկար հիշողությունը: Այնպես որ՝ ծամեք բոլոր ատամներով և մանրամասն»:

Հետո նորից է խոսում գրողի իշխանության մասին և ավելացնում. «Նույնիսկ իշխանությունն է ենթարկվում գրողի իշխանությանը: Վերջին հաշվով: Պոետը սպանվում է, խաչվում է, ոչնչանում է: Նրա հետ ինչ ասես կարող է պատահել: Բայց հետո պարզվում է ճիշտ հակառակն է: Իմ կարծիքով իրական իշխանությունը հետևյալն է՝ այն ենթարկվում է կյանքին: Մարդիկ, ովքեր հասկանում են սա՝ կարող են երկար լինել իշխանություն: Իսկ նրանք, ովքեր չեն հասկանում, հազիվ թե երկար ձգեն իրենց իշխանությունը: Սա էության մասին է. պետք է կյանքից մեծ կախվածության մեջ լինել. հենց սա է իշխանությունը, և ոչ թե հակառակը: Դրա համար էլ որտեղ ավելի շատ կյանք, այնտեղ էլ՝ ավելի մեծ իշխանություն»:

Գոհար ՎԵԶԻՐՅԱՆ

ԼՈՌՎԱ ԱՍՊԵՏ



1999 թվականին, առաջին անգամ Հայաստանում, Վանաձոր քաղաքում, սահմանվեց «ԼՈՌՎԱ ԱՍՊԵՏ» Պատվո շքանշանի կոչումը՝ Լոռու Մարզպետարանի աջակցությամբ և «Ինտերկապ» Բարեգործական Կենտրոնի նախաձեռնությամբ ու հովանավորությամբ /ՀԿ, որը հիմնադրվել է 1990թ.-ին Վանաձորում/:

Պատվո շքանշանակիրներ են ճանաչվել և պարգևատրվել հիմնականում այն լոռեցիները, որոնք իրենց տաղանդով, քրտնաջան աշխատանքով, արիությամբ և մարդասիրությամբ համաշխարհային փառք ու ճանաչում են ձեռք բերել: Նրանք ոչ միայն լոռեցիների, այլև համայն հայության և մեր բարեկամ ազգերի պարծանքն են:

Անցած տասը տարիներին ընդամենը 22 հարգարժան այրեր են ճանաչվել և դարձել «ԼՈՌՎԱ ԱՍՊԵՏ», որոնց թվում են՝

Օլիմպիական խաղերի, Աշխարհի, Եվրոպայի և ԽՍՀՄ բազմակի չեմպիոններ և մրցանակակիրներ – Ալբերտ ԱԶԱՐՅԱՆ, Ստեփան ՍԱՐԳՍՅԱՆ /Ռուսաստան/, Սամսոն ԽԱՉԱՏՐՅԱՆ, Շավարշ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ /Ռուսաստան/, Գագիկ ՂԱԶԱՐՅԱՆ և Աշխարհի առաջին բացարձակ հայ չեմպիոն Վախթանգ /VIC/ ԴԱՐՉԻՆՅԱՆ /Ավստրալիա/;

Վաստակաշատ մարզիչներ, մանկավարժներ և գործիչներ – Վազգեն ԲԱԴԱԼՅԱՆ, Գուրգեն ԳԵՎՈՐԳՅԱՆ և Լյուդվիգ ՊԵՏՐՈՍՅԱՆ;

Հայոց բանակի կայացման ակտիվ մասնակցության, արիության և հայկական հողերի ազատագրման մեծ ավանդի համար – գեներալ-լեյտենանտ Միքայել ԳՐԻԳՈՐՅԱՆ;

Գիտության, արվեստի, մշակույթի ասպարեզներում բացառիկ հաջողություններ և միջազգային ճանաչում ձեռք բերած գործիչներ – Սոս ՍԱՐԳՍՅԱՆ, Արտավազդ ՓԵԼԵՇՅԱՆ /Ռուսաստան/, Սոկրատ ԱՔՄԱՔՉՅԱՆ, Յակով ԽԱՉԻԿՅԱՆ, Սերգեյ ԴԱՆԻԵԼՅԱՆ, Մելս ՍԱՆԹՈՅԱՆ և Հրաչյա ՍԱՐՈՒԽԱՆ;

Լոռու մարզում թեթև արդյունաբերության զարգացման ու հզորացման և 1988 թ. ավերիչ երկրաշարժի հետևանքների վերականգնման գործում մեծ ավանդի համար – Ռաֆայել ՄԽԻԹԱՐՅԱՆ, Հենրիկ ՇԱՀԲԱԶՅԱՆ;

Երկարամյա մարդասիրական և բազմաբնույթ հանրային բարեգործությունների հեղինակներ և ժողովուրդների բարեկամության ջատագովներ – Սամվել ԶԵՆՅԱՆ /Ֆրանսիա/, Ռայներ ՔՈԶԵԼ /Գերմանիա/ և Սամվել ԿԱՐԱՊԵՏՅԱՆ /Ռուսաստան/:

Արամ ՔՈՉԱՐՅԱՆ,
Հայաստանի Հանրապետության
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ մարզպետ

Նորայր ԶՈՒԼՈՅԱՆ
Հայաստանի «ԻՆՏԵՐԿԱՊ»
Բարեգործական Կենտրոնի հիմնադիր նախագահ

01.02.2009 թ. **ք. Վանաձոր**

Առանց աստղերի հերոսը

«Հայրենական մեծ պատերազմի մարտերում կատարած սխրագործությունների համար Մուկուչ Բեկչյանը երկու անգամ ներկայացվել է Խորհրդային Միության հերոսի կոչման: Երրորդ անգամ ներկայացվել է պատերազմից կես դար անց...»:

Այս սեղմ տողերի տակ թաքնված է Հայրենական մեծ պատրազմի լեգենդար հետախույզի կյանքի պատմությունը: Պատերազմի դժվարին տարիները Մ. Բեկչյանը պատվով հաղթահարեց, ոչ միայն պատվով, այլև հերոսաբար:

Մուկուչ Սիսակի Բեկչյանը ծնվել է 1921 թ. Համզաչիման գյուղում: Նախնական կրթությունը ստացել է հայրենի գյուղի դպրոցում: Գյուղի երկինքը լազուրով էր պատված, իսկ աստղերը հմայող էին ու ձգող: Պատանի Մուկուչին հրապուրում էր երկինքը, նա երազում էր ռազմական օդաչու դառնալ: Պարտադիր զինվորական ծառայությունից հետո, 1941 թ. ընդունվում է Ռիգայի զինվորական ավիացիոն ուսումնարան, սակայն սկսվում է Հայրենական մեծ պատերազմը, կիսատ թողնելով ուսումը Մ. Բեկչյանը հայտնվում է ռազմաճակատում: Ծանր մարտերից մեկի ժամանակ վիրավորվում է ու հայտնվում Իվանովո քաղաքի հոսպիտալում: 1941 թ. աշնանը Իվանովոյում կազմավորվում է 117-րդ հրաձգային դիվիզիան, որի՝ 105-րդ առանձին հետախուզական վաշտի կազմում է ընդգրկվում Մ. Բեկչյանը: Հետախույզների մասին առասպելներ են պատմում, սակայն անհավանական թվացող պատմությունները իրական սխրանքների հիմքն ունեն: Մուկուչ Բեկչյանն ապացուցեց, որ հետախույզ չեն դառնում, այդպիսին ծնվում են: Առաջին իսկ մարտի ժամանակ աչքի է ընկնում, պարգևատրվում «Արիության համար» մեդալով: Բազմաթիվ դժվարին, անհնարին թվացող մարտական գործողությունների ակտիվ մասնակիցը եղավ: Նեվելի տակ կատարված գործողության ժամանակ ցուցաբերած խիզախության համար պարգևատրվում է «Կարմիր Դրոշի» շքանշանով: 1944 թ. մայիսին կարողանում է դիվիզիայի 240-րդ գումարտակը դուրս բերել շրջապատումից:

«Վաշտի վիրավորված հրամանատարին փոխարինած Բեկչյանը հետախույզներին մարտի է տանում: Մարտն ընդունում է կատաղի բնույթ: Հետախույզները դիմում են ձեռնամարտի: Մուկուչը վիրավորվում է, բայց նույնիսկ այդ վիճակում ղեկավարում է մարտը: Շրջապատված գումարտակը փրկվում է»:

Դիվիզիայի հրամանատար գեներալ-մայոր Երմոլայ Կոբարիձեն անձնական խիզախության, արիության ու հերոսության համար Մուկուչ Բեկչյանին ներկայացնում է Խորհրդային Միության հերոսի կոչման: Սակայն Մոսկվայից ուղարկում են միայն «Լենինի» շքանշանը: 1945 թ. լեհական Պոզնան քաղաքի ազատագրման ժամանակ ցուցաբերած բացառիկ խիզախության համար երկրորդ անգամ է ներկայացվում հերոսի կոչման, բայց այս անգամ էլ աստղը չի գտնում իր տիրոջը:

1991 թ. մայիսի 9-ին, Իվանովո քաղաքում, Կարմրադրոշ, Սուվորովի 2-րդ աստիճանի շքանշանակիր, Պոզնանյան հրաձգային դիվիզիայի վետերանների խորհուրդը հատուկ որոշումով դիմեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությանը, հաստատելու Մուկուչ Բեկչյանի Խորհրդային Միության հերոսի կոչումը, սակայն չգիտես ինչու, այդ դիմումն էլ չօգնեց վերականգնելու արդարությունը:

Արդեն ավանդաբար, Մ. Բեկչյանը, Մոսկվայում Հաղթանակի շքերթին մասնակցող հայաստանցի 5 հրավիրյալների շարքում է: Հանդիպումներից մեկի ժամանակ ոսկեզօծ ուսադիրներով գեներալ-գնդապետը գրկից բաց չէր թողնում Բեկչյանին, տարիներ առաջ նրան ստույգ մահից էր փրկել լեգենդար հետախույզը:

Պատերազմից հետո Մ. Բեկչյանը ավարտեց մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը, աշխատեց կուսակցական մարմիններում, շինարարական կազմակերպություններում:

Պահեստազորի ավագ լեյտենանտ Մուկուչ Բեկչյանի կուրծքն են զարդարում կառավարական բարձր պարգևները՝ «Լենինի», «Կարմիր Դրոշի», «Հայրենական մեծ պատերազմի 1-ին աստիճանի» 2, «Կարմիր աստղի» 2 շքանշանները, ինչպես նաև 18 մեդալները:

Ավագ ԽԱՌԱՏՅԱՆ
«Մարգահովիտ» թերթի խմբագիր

ՉՄՈՌԱՆԱՆՔ ՄԵԾ ՀԱՅՐԵՆԱԿԱՆԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ

64 տարի առաջ ավարտված Հայրենական մեծ պատերազմին խորհրդային մյուս ժողովուրդների հետ մասնակցեց նաև հայ ժողովուրդը: Ավելի քան կես միլիոն հայ երիտասարդներ մեկնեցին ռազմաճակատ, շատերը չվերադարձան, շատերն էլ փառքով պսակեցին իրենց անունը: Նրանցից 106-ն արժանացան Սովետական Միության հերոսի կոչման: Այս օրերին փողոցում դարձյալ կհանդիպենք կուրծքը շքանշաններով ու մեդալներով զարդարված ծերունազարդ տատիկների ու պապիկների: Շատերն արդեն 80-նն անց են: Բնականաբար, ուշ-ուշ են դուրս գալիս փողոց, սակայն մայիսի 9-ին բոլորն էլ աշխատում են գնալ Հաղթանակի զբոսայգի, ծաղիկներ դնել Անհայտ զինվորի հուշարձանին, հանդիպել հին ընկերներին, վերհիշել պատերազմական դժվարին օրերը, հաղթանակի բերկրանքը, ողջույններ ու բարեմաղթանքներ ստանալ: Ցավոք, մենք այնքան էլ հաճախ չենք հիշում Հայրենական մեծ պատերազմի վետերաններին, ըստ արժանվույն չենք գնահատում նրանց, իսկ նրանց շարքերը հետզհետե նոսրանում են:

Բոլոր վետերաններն էլ անհամբերությամբ են սպասում մայիսի 9-ին: Հաղթանակի օրը, ավանդույթի համաձայն, նրանք կգնան Հաղթանակի զբոսայգի, նորից կարթնանան հուշերը, նորից կհիշեն հին ընկերներին: Ափսոս որ բոլորը չեն կարողանա մասնակցել հանդիսություններին: Ափսոս որ վետերաններին հիշում ենք միայն Հաղթանակի տոնի առիթով:

Հոգեւոր-լուսավորչական անկյուն Մոսկվայի կենտրոնում

Մեզ համար սովորական է, որ այնտեղ, որտեղ մեր եկեղեցին է, այնտեղ են դպրոցը, մամուլը, լուսավորչական, բարեգործական, հասարակական կազմակերպությունները... Երբ Եզրաս սրբազանը նշանակվեց Հայ եկեղեցու Նոր Նախիջևանի և Ռուսաստանի թեմի առաջնորդ, ապա նա առաջին հերթին խնդիր դրեց ռուսաց մայրաքաղաքում կառուցել հայկական նոր եկեղեցի: Շատ է փոքր ու անշուք քաղաքի միակ Սբ Հարություն եկեղեցին, այն էլ՝ գերեզմանոցի հարևանությամբ:

Սակայն նոր եկեղեցու կառուցումը պահանջում էր տևական ժամանակ և հսկայական ջանքեր: Ուստի հոգևոր այրը հայապահպանության մտահոգությամբ որոշեց նախ ստեղծել հոգևոր-լուսավորչական-մշակութային կրթական օջախ Մոսկվայի՝ ինչ-որ տեղ արդեն ազգային դեմքը կորցրած հայության համար:



Թվում է՝ սա համեմատաբար հեշտ լուծվող հարց է, դե, շենք ես վարձակալում, 90-ական թվականներին Մոսկվա գաղթած բազում հայաստանցի մանկավարժներից կոլեկտիվ ես ստեղծում ու... առա՜ջ: Բայց այդպես կարող է մտածել միայն ոչ մոսկվացին: Այստեղ առաջին հերթին պետք էր գործ ունենալ քաղաքային իշխանությունների չինովնիկների հետ, որ բնավ էլ դյուրին գործ չէ (հո մենակ հայեր չեն ապրում Մոսկվայում): Բայց Եզրաս սրբազանը այդ իմաստով, կարելի է ասել, «անզնահատելի» փորձ էր ձեռք բերել մինչ այդ Պետերբուրգում իրականացրած հոգևոր առաքելության ժամանակ, եթե տեղի հայությանն էր վերադարձրել եկեղեցիներ, եկեղեցապատկան շինություններ, հողատարածքներ և այլն (պետերբուրգցի մի հայ պաշտոնյա մի անգամ պատմեց, որ այն ժամանակվա քաղաքագլուխ Անատոլի Սոբչակը հանդիպումներից մեկի ժամանակ հումորով ասել է, որ եթե Եզրասի նման մի քանի «դիվանագետ» ունենար իր շրջապատում, ապա սարեր շուռ կտար):

Մոսկվայում խնդիրը բարդանում էր նաև այն առումով, որ սրբազանն ուզում էր անպայման կրթական կենտրոնը բացել քաղաքի գերհագեցած կենտրոնական մասում: Ընկրկելով նրա համառության առջև, քաղաքապետարանը ի վերջո քառահարկ մի շենք առաջարկեց «Նովոսլոբոդսկայա» մետրո-կայարանի մոտ: Բայց երբ սրբազանը ոտք դրեց այդ շենքը, չասենք հուսահատվեց, սակայն սրտնեղեց. կիսավեր մի շինություն էր դա: Բայց ոչինչ, տեղի հայությունը աջակից եղավ հիմնանորոգմանը, և 2006 թվականի սեպտեմբերին «Հայորդաց տուն» գեղեցկահունչ անունով հոգևոր-լուսավորչական կենտրոնը հանդիսավորապես բացեց իր դռները մոսկվացի հայերի առջև՝ փոքրից մինչև տարեցը, ով ուզում է հաղորդակցվել հոգևորին ու ազգայինին:

«Մեր նպատակն է, ասում է կենտրոնի տնօրեն Հմայակ Գևորգյանը, որ նոր սերունդը չկորցնի իր հավատքը, մայրենի լեզուն, պատմությունն ու մշակույթը, լինի Ռուսաստանի և Հայաստանի արժանավոր ու հայրենասեր քաղաքացի: Մի քանի հարյուր սաների հետ աշխատում են 18 մանկավարժներ: Կենտրոնում գործում են նաև խոսքի զարգացման դասարանը, թատերական ստուդիան, շախմատի, ազգային երաժշտական գործիքների խմբակները և այլն: Գրական-գեղարվեստական «Շողակաթ» խումբը անցկացնում է հայ պոեզիայի սքանչելի երեկույթներ: Հատուկ հպարտության առարկա է հայկական ժողովրդական պարերի ստուդիան: Մի խոսքով, արդեն կազմավորված մեր կոլեկտիվը կոչված է նվիրվելու Մոսկվայի հայության նոր սերնդի հայեցի դաստիարակության գործին»:

Թեմը հատուկ ուշադրություն է դարձնում աճող սերնդի հոգևոր դաստիարակությանը, առավել ևս, որ աստվածամերժության տասնամյակների ընթացքում տեղի հայությունը զրկված է եղել Ամենազորին առնչվելու հնարավորությունից:

«Մոսկվայում մեծ հայություն կա, ասում է կենտրոնի հոգևոր դաստիարակ Առաքել քահանա Ամիրյանը, և այս պարագան մեզանից պահանջում է ամենայն նպաստել հոգևոր-ազգային ինքնապահպանմանը, անել ամեն ինչ, որ այստեղ ծնված հայ երեխաներն ամուր պահեն իրենց հավատքը, իրենց հայ զգան, որ հայրենիքից հեռու ապրող մեր հայրենակիցները չկորցնեն իրենց արմատները»:

Ռուբեն ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ, Մոսկվա

ՊԱՐԶՎՈՒՄ Է, ՈՐ...

Ռուս գիտնականները պարզել են, որ մամոնտները վերացել են ոչ այնքան մարդու կողմից ոչնչացվելու, որքան աշխարհագրական ու կլիմայական պրոցեսների հետևանքով: Մամոնտների «գերեզմանոցից» հանված ոսկորները հետազոտելով՝ նրանք դրանցում հայտնաբերել են փոփոխություններ, որոնք բնորոշ են օրգանիզմի կենսունակության վրա ազդող որոշակի հիվանդությունների, ինչպիսիք են օստեոմալյացիան (ոսկորների կակղում), օստեոպորոզը (ոսկրահյուսվածքի բարակում) և ողների սերտաճումը: Գիտնականների ասելով՝ այս հիվանդությունները կարող էին առաջանալ հինավուրց կենդանիների սննդաբաժնի մեջ հանքանյութերի պակասից: Մամոնտները դրանք ստանում էին կավի որոշակի տեսակներից, որոնք անհետացան տեկտոնական պրոցեսների արդյունքում:

***

Որոշ օրգանիզմների համար գլոբալ տաքացումը կործանարար երևույթ է, այլ օրգանիզմների համար կարող է փրկություն դառնալ: Ավստրալիայի ափերի մոտի ջրի ջերմաստիճանի բարձրացումը, Ադելաիդայի համալսարանի պրոֆեսոր Կորի Բրեդշոուի կարծիքով, թույլ կտա միանալու ավստրալիական մոխրագույն շնաձկների (դայակ շնաձկներ) արևելյան և արևմտյան պոպուլյացիաներին, որ բաժանված են Հարավային Ավստրալիայի նահանգների ու Վիկտորիայի ափերի ցուրտ ջրերով: Ազատ միգրացիան թույլ կտա վերականգնելու անհետացման սպառնալիքի տակ գտնվող պոպուլյացիան:

***

NASA-ի տվյալների համաձայն, տիեզերական աղբի ծավալները սպառնալի չափերի են հասնում: Ամենաշատ աղբը երկրից 800 կմ (որտեղ այն պահպանվում է տասնյակ տարիներ) մինչև 1500 կմ վերևում է (որտեղ դրա «գոյատևման» ժամկետը դարերով է չափվում): Սակայն մասնագետները նշում են, որ տիեզերանավերի թռիչքի բարձրություններում և Միջազգային տիեզերակայաններում (300-400 կմ) վտանգավոր աղբ նույնպես շատ կա: Այժմ ուղեծրում արհեստական ծագման 12851 խոշոր օբյեկտ կա, տիեզերական աղբի քանակը 1-ից մինչև 10 սմ չափերով, 200000 միավոր է կազմում, իսկ 1 սմ-ից պակաս մասնիկների թիվը տասնյակ միլիոնների է հասնում:

Լոռիում ֆուտբոլի կանանց թիմ ստեղծվեց


Լուսանկարում՝ Վարդինեի թիմը

«ԼՄՍ». այսպես է կոչվում Վանաձորում նորերս ստեղծված ֆուտբոլի կանանց այն թիմը, որն այս տարվանից կմասնակցի ֆուտբոլի կանանց ՀՀ առաջնությանը: Լուրն ինչ-որ տեղ սենսացիոն է, որովհետև թե քաղաքը, թե մարզը արդեն մի քանի տարի ՀՀ առաջնություններին մասնակցող թիմեր չունեն: Եվ հանկարծ... կանանց թիմ, կանանց ֆուտբոլ: Ոչինչ անմշակ, ամուլ «հողում» չի աճում: Թիմի ստեղծմանն իր վճռական նպաստն է բերել ՀՀ ֆուտբոլի ֆեդերացիան, օգնել, սատարել են ֆուտբոլի լոռեցի նվիրյալներ, կազմակերպություններ: Գլխավոր մարզիչը «Բանանց» ակումբի սան, կանանց ազգային հավաքականի խաղացող լոռեցի Վարդինե Խանզադյանն է: Հենց նրա հետ են հույսեր կապել բոլոր օժանդակողները:

Վարդինեն իր կյանքն այլևս առանց ֆուտբոլի չի պատկերացնում: Խաղալ սկսել է դեռ խավարի ու ցրտի տարիներին, երբ հազիվ 7-8 տարեկան էր, խաղացել է բակում, ասֆալտի վրա, տղաների հետ: 10 տարեկան էր, երբ նրան ընդգրկեցին «Ջուխտ ախպուր» պատանեկան թիմում, որի կազմում երկու անգամ մասնակցեց կաշվե գնդակի համաքաղաքային մրցաշարերին, երկու անգամն էլ նվաճելով երկրորդ մրցանակը: Ի դեպ, 20 թիմերի խաղացողների մեջ միակ աղջիկը նա էր: 12 տարեկան էր, ընդգրկեցին «Վա Բա» ֆուտբոլային թիմում: Երևանյան ընկերական հանդիպումներից մեկում նկատեցին արագաշարժ, եռանդուն կիսապաշտպանին, խաղից հետո մոտեցան, հարցրին՝ Տղա ջան, քանի՞ տարեկան ես... Պատասխանեց՝ 14 տարեկան, բայց ես... տղա չեմ... Պատասխանը նրանց անչափ զարմացրեց, դժվար էր պատկերացնել, որ տղաների հետ «տղայավարի» ֆուտբոլ խաղացողը կարող է և աղջիկ լինել: Հաջորդ օրվա առավոտյան Վանաձորի նրանց տան դուռը թակեցին «Բանանց» ակումբի ներկայացուցիչները և առաջարկեցին տեղափոխվել ակումբի կանանց թիմ, ուսումն էլ շարունակել մայրաքաղաքի Օլիմպիական հերթափոխի մարզչական քոլեջում: Լավ խաղի համար շուտով նրան ընդգրկեցին պատանեկան, ապա երիտասարդական հավաքականների կազմում: «Արարատ-73»-ի հանրահայտ հարձակվող Նիկոլայ Ղազարյանը, հիացած խաղով, Վարդինեի հորը՝ «Ավտոգեն-Մ» ընկերության աշխատակից Սամվել Խանզադյանին ավետում է՝ Հիանալի աղջիկ ունեք, մեծ ապագա է սպասվում: Այժմ սովորում է Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտում, մարզում է «ԼՄՍ» թիմը, որի աղջիկ անդամների հոգում ևս, ֆուտբոլի մարզադպրոցի մարզիչ, ֆուտբոլի նվիրյալ Աշոտ Թաիրյանի հետ, նրա աջակցությամբ, նրան հաջողվել է բորբոքել ֆուտբոլային հուրը: Թիմն այս տարի արդեն հաջող քննություն է հանձնել. մասնակցել է կանանց ֆուտբոլի առաջնությանը և նվաճել երրորդ հորիզոնականը: Խաղացողներից երեքին արդեն ընդգրկել են պատանեկան, երեքին՝ երիտասարդական հավաքականներում: Մարզիչ Վարդինեն առաջիկայում երկու կարևոր երազանք ունի՝ ՀՀ հավաքականի կազմում հաջող հանդես գալ մայիսին Էստոնիայի հավաքականի հետ կայանալիք հանդիպումում, և մարզել այնպիսի թիմ, որն իր վարպետ խաղով ընդունվի ֆուտբոլասերների կողմից, սիրվի ու առաջընթաց ունենա:

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ
Լուսանկարը՝ Էմիլ ՅԱՎՐՅԱՆԻ

ՊԱՐԶՎՈՒՄ Է, ՈՐ...

Շաքարեղեգի, եգիպտացորենի, սոյայի ցողուններից կամ կանճրակի (հլածուկ) սերմերից ստացվող կենսավառելիքը բավական թանկ արժե: Դրա արտադրությունը ավելի էժան դարձնելու նպատակով իսպանացի գիտնականներն առաջարկում են օգտագործել ձիթապտղի կորիզները, որ մեծ քանակությամբ մնում են ձիթայուղի արտադրությունից և ձիթապտղի պահածոյացումից հետո: Լաբորատոր պայմաններում 100 կգ ձիթապտղի կորիզներից հաջողվել է ստանալ 5, 7 կգ կենսավառելիք, որը կարող է փոխարինել բենզինին ու դիզվառելիքին:

ԱՐԴԱՐ՝ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ՎԵՐԱԲԵՐՎՈՂ ԱՄԵՆ ԻՆՉՈՒՄ

Արթուր Սարգսյանը այն մարդկանցից է, ում երիտասարդությունը համընկավ իր երկրի ճակատագրական ժամանակաշրջանին: Եվ դա, պատահականություն չէր, ինչպես եւ պատահականություն չէր այն բազում նվիրյալների աշխարհ գալը, ովքեր պիտի փոխեին պատմության անիվը, ովքեր պիտի հայոց պատմության մի նոր էջ ստեղծեին ու հավետ զինվոր մնային այդ պատմության քառուղիներում: Ափսոսանքով պետք է ասել, որ նրանցից շատերը իրենց մոռացված են համարում՝ մոռացված ֆավորիտներ: Բայց եթե ընկճվում էլ են, երբեք հայրենիքի «երեսովը չեն տալիս» իրենց արածը, պարզապես լուռ խոնարհում են գլուխները: Այսօր նրանցից շատերը մահանում են իրենց ծաղկուն տարիքում, թվում է՝ սովորական մահով, բայց նրանք բոլորն էլ մահանում են պատերազմից, անքուն ու ցուրտ գիշերներից, սթրեսներից, կորուստների ցավից: Այո, երբեմն, վհատության աստիճան հոգնում են, բայց երբեք իրենց փայլը չեն կորցնում վեհ գաղափարներով տոգորված նրանց հայացքները: Այդպիսի մարդկանց հեշտ է տարբերել բազմության մեջ՝ նրանք մեկ այլ կերպ են նայում, ասել է, թե խորհում, ապրում ու գործում են ազնվության ու բարձր գաղափարների տեսանկյունից: Եվ կրկին պատահական չէ, որ արցախյան շարժման ակտիվ մասնակից, ապա պայքարի զինվոր, սպա, խելացի ու խիզախ հրամանատար Արթուր Սարգսյանը մեր զրույցի ժամանակ թվարկեց այն մարդկանց անունները, ովքեր հերոսական օրերի չխամրող փարոս էին եւ ուղեկցում էին ժողովրդին դեպի փրկության ափ:

- Փետրվարյան հերոսական այն օրերից իմ հիշողությունից չեն հեռանում Արթուր Մկրտչյանի, Էմիլ Աբրահամյանի, Մանվել Սարգսյանի, Իգոր Մուրադյանի, Գագիկ Սաղխյանի, Նելլի Կասպարովայի, Վիգեն Գրիգորյանի դեմքերը:

1988 թ. Փետրվարյան օրերին դիզակցիների հոգում զարթնեց հաստատակամության, համախմբվածության ու կարգապահության աստվածը: Մարդուն ազատ ապրելու եւ արարելու ի վերուստ տվածը դարձավ օրվա հրամայականը, որ ապազայի համար պայքարելու ուժ, կամք ու հավատ ներշնչեց:

- Ինչ վառ հիշողություններ ունեք կապված այդ օրերի հետ:

- 1988 թ. փետրվարի սկզբներին ես՝ նախկին սովետական բանակի սպաս /ծառայում էի Վրաստանում/ առիթը բաց չթողնելով գործուղվեցի Հայաստան ու այնտեղից ճանապարհվեցի Արցախ: Փետրվարի 12-ին Հորադիզի երկաթագծի կայանից տաքսիով /ի միջի այլոց վարորդը ադրբեջանցի էր/ հասա Հադրութ: Ժամը 23-ի կողմերն էր: Առաջինը, որ նկատեցի, դա այդ ժամվա համար քաղաքի անսովոր աշխուժությունն ու ակտիվությունն էր: Մեքենայից իջնելուց իսկույն նկատեցի, որ ժողովուրդը շարժվում է դեմի շրջկոմի շենքը:

Միանալով նրանց՝ ներկայացա հավաքատեղին, այստեղ հանդիպեցի իմ նախկին ընկերներին, որոնց հետ դեռ մինչեւ բանակ



զորակոչվելը երդվել էինք, որ մեր շարժումը կշարունակենք այնքան ժամանակ մինչեւ Արցախը չմիացնենք մայր Հայաստանին:

- Իսկ առջեւում դեռ մի ամբողջ կյանք էր, որի մեջ ներխուժեց պատերազմը:

Երկրի համար այդ դժվարին օրերին դուք ստանձնեցիք ինքնապաշտպանական ջոկատի հրամանատարի, ապա 1992թ. մինչեւ 94-ի մայիսը՝ մարտական գումարտակի հրամանատարի ծանր ու պատասխանատու գործը: Կա՞ն դեպքեր, որոնք դաջվել ու մնացել են Ձեր հիշողության մեջ:

- Պատերազմի գրեթե ամեն օրը հիշվող է, բայց ավելի վառ հիշողությանս մեջ մնացել է Սարին Շենի ազատագրումը: Դա 1991 թ-ի նոյեմբերի 16-ն էր: Սարին շենը մի քանի ամիս շարունակ գտնվում էր Ազերիների գերության տակ, գտնվելով բարձունքի վրա՝ այն նաեւ Հադրութի համար շատ հարմար կրակետ էր: Իսկ մենք թվով 22-23 հոգի, այսինքն մի ջոկատ, որը ղեկավարում էի ես, առաջին անգամ էինք գնում նման լուրջ մարտական գործողության: Ես չեմ մոռանում այդ օրվա ոգին, մեզանից շատերը հենց այդ օրը ստացան իրենց մարտական առաջին մկրտությունը: Դա հաղթանակի բերկրանք էր, աննկարագրելի էր ոգեւորությունը: Ազատագրելուց հետո, Արթուր Մկրտչյանը, որ այդ ժամանակ շտաբի պետն էր, եկավ ու հենց գյուղի բարձունքին խնջույք կազմակերպեց ազատամարտիկների համար:

- Արդյոք իրականացել են այն օրերի երազանքները:

- Մասամբ, այո: Ցավոք, այդ երազանքների իրականացում շատ թանկ է նստել մեր ժողովրդի վրա: Ցավոք շատ կորուստներ ենք ունեցել, հազարավոր անմեղ զոհերի արյուն է թափվել: Ձեռքբերումների հետ մեկտեղ մնացել են նաեւ անկատար իղձեր:

- Որոնք են դրանք:

Առաջինը այն է, որ մենք հոգեբանորեն դեռ չենք ընկալում, որ Արցախը մաս է կազմում Մայր Հայաստանին:

Երկրորդ՝ մեր պայքարը քաղաքական, պետական, ազգային եւ ինչու չէ նաեւ պահանջատիրական դաշտում դեռ չի ավարտվել:

Երրորդ՝ մեզ ընդունում են ոչ թե որպես սուբյեկտի, այլ որպես օբյեկտ, որի հետ կարելի է խաղալ:

Չորրորդ՝ արագ չենք կողմնորոշվում աշխարհաքաղաքական տարբեր իրադրություններում:

Ես կարծում եմ, որպեսզի հաղթանակենք, պետք է կարողանանք պահպանել անցյալի լավերը, գործենք միայն ազգին շահավետ ու մտածենք թե ինչ ենք թողնելու մեզնից հետո:

- Ինչպիսի՞ն կուզենայիք տեսնել Ձեր կերտած հայրենիքն ու ժողովրդին:

- Ծովից-ծով Հայաստան ու դրախտային կյանք:

Արթուրն այսօր խաղաղ ու ստեղծագործ աշխատանքի է լծվել, ետեւում են մնացել պատերազմն ու բանակային առօրյան, որտեղից զորացրվել է 1997 թվականին մայորի կոչումով, որպես զորամասի շտաբի պետ: Այսօր նրա որդին, որ հորից ժառանգել է ըմբոստությունն ու ինքն իր եւ շրջապատի նկատմամբ պահանջկոտ լինելը, պարտադիր զինվորական ծառայության է եւ հայրը ուզում է, որ որդին մնա, ընտանիք կազմի եւ ապրի հայրենի Արցախում:

Արթուրը այն մարդկանցից է, ում հետ քո զրույցը սահուն անցնում ու դառնում է գեղեցիկի, վեհի գաղափարախոսություն, ում հետ կարողանում ես խոսել այնպիսի բաների մասին, ինչի մասին շատերը գերադասում են լռել: Նա ազատամարտիկ էր պատերազմի ժամանակ եւ մարտիկ այսօր՝ խաղաղ կյանքում: Մարդ, ով երբեք թույլ չի տա իրեն ծխախոտի մնացորդը նետել գետնին, որ երբեք անտարբեր չի անցնի անտարբերության կողքով, իսկ անարդարության դեմ էլ պայքարում է իր արդարությամբ:

Այսօր, ինչպես եւ այն հերոսական օրերին, նա իր համախոհների, իր պայքարի ընկերների կողքին է, ուրախանում է նրանց ուրախությամբ, տխրում, երբ ընկճված են լինում ընկերները: Ուզում է, որ մեր հասարակությունը կարողանա «թացը» «չոր»-ից տարբերել, որ ամեն ինչ այնպես լինի, որպեսզի իրեն խեղճացած ու մոռացված չզգա երկրի պաշտպանը:

Հայրենիքը իր քաջ մարտիկին պարգեւատրել է «Մարտական խաչ» երկրորդ աստիճանի շքանշանով, սակայն Արթուրը իրեն չի կարող հպարտ զգալ, քանի դեռ պարգեւների չեն արժանացված շատ նվիրյալներ, նրանց շարքերում էլ հայտնի «Աֆղանցիների» ջոկատի տղաները, որ ամեն օգոստոսի 15-ի գալիս են այցելելու, քայլելու իրենց մարտական ճանապարհներով, տեսնելու իրենց մարտական ընկերներին: Եվ ցասում է հայտնում՝ ախր շատ հաճախ պարգեւի ներկայացնողները իրենք գրեթե ոչինչ չգիտեն պատերազմից ու նրանցից, ում ներկայացնում են, կամ չեն ներկայացնում:

...Հիմա խաղաղ է Արցախի երկնակամարը, խաղաղ է, որովհետեւ պատերազմի դաշտում ըմբոստ ու անձնուրաց էին տղաները, նրանք, ովքեր այսօր մեր երկրի փրկությունը տեսնում են այլեւս ոչ թե պատերազմի մեջ, այլ միայն ու միայն տնտեսական հզորացման:

Արփի ՎԱՆՅԱՆ

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԵՐԳԻԾԱՆՔ

Ո՞Վ Է ԴԱՌՆԱԼՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ

«Ո՞վ է ուզում դառնալ միլիոնատեր» խաղի սցենարով

Հեռուստախաղն այս անգամ նվիրված է քաղաքապետի առաջիկա ընտրությանը: **Խաղավար.** - Հեռուստախաղին մասնակցության հայտեր էին ներկայացրել **Գվիդոնը (Գավառ), Մուշոն (Ապարան), Օնոն (Գյումրի), Վալոդը (Հրազդան), Գոքորը (Վանաձոր), Հովոն (Երեւան, Բանգլադեշ)**:

Նշված բառերը դասավորել այնպես, որ ստացվի սահմանադրության հոդվածներից մեկը: Ահա այդ բառերը՝ **«իրավունք»**, **«ազատության»**, **«յուրաքանչյուր»**, **«ունի»**, **«մարդ»**, **«խոսքի»**:

Եվ այսպես՝ համակարգիչը հաղթող ճանաչեց Մուշոյին Ապարանից: Նա ճիշտ պատասխանը գտավ ամենից արագ՝ **«Յուրաքանչյուր մարդ ունի խոսքի ազատության իրավունք»**: Շնորհավորում եմ: Մուշո, ինչո՞վ է բացատրվում Երևանի քաղաքապետի ընտրության մեր այս հեռուստախաղին հատկապես մարզերի բնակիչների ակտիվությունը, Երևանից ընդամենը մեկ մարդ է մասնակցել:

Մուշո. - Երևանցիներին այս խաղը չի հետաքրքրում, նրանք ուրիշ խաղերի մեջ են:

Խաղավար. - Իսկ ձեզ հատկապես ի՞նչը հետաքրքրեց, որ մասնակցեցիք այս խաղին:

Մուշո. - Այս ընտրության մասին ոմանք ասում են, որ մեր երկրի ապագայի ընտրությունն է լինելու, մյուս մասն էլ, թե մայրաքաղաքում ինչքան ազգուտակ ունեք, ոտի հանեք: Հենց նեղն ընկնում են նոր են մեզ հիշում:

Խաղավար. - Լավ, չշեղվենք խաղից: Ծանոթացնեմ խաղի կանոններին: Ասեմ, որ ունի որոշակի առանձնահատկություններ: Առաջին հարցի ճիշտ պատասխանի դեպքում կստանաք հինգ հազար դրամ, որն անձեռնմխելի է:

Մուշո. - Չէ հա, կարո՞ղ է դա ընտրակաշառք է:

Խաղավար. - Ոչ, ոչ, ի՞նչ եք ասում, հո խելքը հացի հետ չե՞նք կերել: Մեր խաղին հետևում է ողջ հայությունը, դատախազը մեզ վրա հոդված կդնի:

Մուշո. - Դատախազից արխային, նա մեր մարդն է, քանի ես էստեղ եմ, նման բան մտքերովդ չանցնի:

Խաղավար. - Հարց առաջին. **«Ովքե՞ր կարող են մասնակցել Երեւանի քաղաքապետի ընտրությանը»**: **Ա.** Սփյուռքահայերը, **Բ.** Գավառահայերը, **Գ.** Վրացահայերը, **Դ.** Երևանահայերը: Շահող գումարը՝ 5000 դրամ:

Մուշո. - **Ա** տարբերակը բացառում եմ. սփյուռքահայերը Երևանից ոնց որ նեղացած են: **Բ** տարբերակը մի քիչ խելքի մոտիկ է, մայրաքաղաքում հիմա ավելի շատ գավառներից եկածներն են, քան բուն երևանցիները, բայց բոլոր դեպքերում գավառցին մնում է գավառցի: **Գ** տարբերակը նույնպես բացառում եմ. վրացահայերը իսկի իրենց մոտ չեն կարողանում ընտրություն անել, ուր մնաց էստեղ մասնակցեն: Մնաց **Դ** տարբերակը՝ երևանցիները:

Խաղավար. - Դա ձեր վերջնակա՞ն պատասխանն է:

Մուշո. - (Մտքերի մեջ է ընկնում): Ի՞նչ, մտածում եք, որ եթե գործող քաղաքապետի օգտին չքվեարկեն, երևանցիներին թույլ չե՞ն տա մասնակցել ընտրություններին:

Խաղավար. - Ես ոչինչ էլ չեմ մտածում, պատասխան տվողը դուք եք:

Մուշո. - (Վճռական) Տարբերակ **Դ**՝ երևանցիները:

Խաղավար. - Այո: Ճիշտ պատասխանը՝ ... երևանցիները: Մուշոն շահեց 5000 դրամ առաջին անձեռնմխելի գումարը:

Խաղավար. - Երկրորդ հարց. **«Ի՞նչը սովորաբար չի արվում ընտրությունների ժամանակ»**: **Ա** տարբերակ՝ Ասֆալտապատում, **Բ** տարբերակ՝ Մրցակցին ծեծուջարդ, **Գ** տարբերակ՝ Նախընտրական ծրագրի ներկայացում, **Դ** տարբերակ՝ Անձնագրերի հավաքագրում: Այս հարցին ճիշտ պատասխանելու դեպքում կստանաք 250 000 դրամ: Հիշեցնեմ, որ ունեք օգնության երեք հնարավորություն:

Մուշո. - **Ա** տարբերակն սկզբից նեթ բացառում եմ:

Խաղավար. - Ինչո՞ւ:

Մուշո. - Որովհետև եթե ասֆալտապատում չանեն, ժողովուրդը որտեղի՞ց կիմանա, որ ընտրություններ են լինելու:

Խաղավար. - (հեգնանքով) Երկաթյա տրամաբանություն:

Մուշո. - **Բ** տարբերակը՝ ծեծուջարդը նույնպես ընդունված է, առանց դրա ընտրություն չի լինի: Սա էլ դուրս եկավ: **Գ** տարբերակը, անկեղծ ասած, մի քիչ հասկանալի չէ, ի՞նչ է նշանակում նախընտրական ծրագիր, այդ բանը առաջին անգամ եմ լսում, գուցե ինչ-որ բան սխա՞լ է գրված:

Խաղավար. - Ոչ մի սխալ բան չկա: Նախընտրական ծրագիրն այն է, որ թեկնածուն ներկայացնում է աշխատանքները, որոնք խոստանում է իրագործել ընտրվելուց հետո:

Մուշո. - Բա, որ չիրագործի, ի՞նչ է լինելու:

Խաղավար. - Ոչ մի բան, հաջորդ անգամ նրան չեք ընտրի, մյուսին կընտրեք:

Մուշո. - Բայց ի՞նչ իմանամ, թե էն մյուսը խոստումը կիրագործի:

Խաղավար. - Չգիտեմ, որոշողը դուք եք:

Մուշո. - Լավ, էս մի տարբերակն էլ թողնենք: Անցնենք **Դ** տարբերակին: Անձնագրերի հավաքում: Իմ կարծիքով՝ սա քաղաքակիրթ ձև է, ընտրվողը ուզում է մոտիկից ծանոթանալ իր ընտրողի հետ, իմանալ նրա հասցեն, ծննդյան օրն ու տարեթիվը, որ ընտրվելու դեպքում կարողանա ծնունդը շնորհավորել, չեմ հասկանում՝ ինչ վատ բան կա դրանում: Այս տարբերակը նույնպես բացառում եմ: Էս ինչ դժվար հարցեր եք դրել:

Խաղավար. - Կարող եք օգտվել օգնության հնարավորությունից:

Մուշո. - Լավ, 50/50 վերցնենք:

Համակարգիչը թողեց երկու տարբերակ՝ **Բ** տարբերակ՝ Մրցակցին ծեծուջարդ, **Գ** տարբերակ՝ Նախընտրական ծրագրի ներկայացում:

Մուշո. - **Բ** տարբերակը՝ ծեծուջարդը, կարծում եմ, անհրաժեշտ է, առանց դրա կարգուկանոն չի լինի: **Գ** տարբերակն է, այսինքն ծրագրերի ներկայացումը:

Խաղավար. - Դա վերջնակա՞ն պատասխանն է:

Մուշո. - Այո, որքան հասկացա՝ նախընտրական ծրագիրը թեկնածուների **«ճանապարհային քարտեզն»** է, որը հրապարակման ենթակա չէ:

Խաղավար. - Պատասխանը ճիշտ է: Դուք շահեցիք 250000 դրամ:

Խաղավար. - Երրորդ հարց. **«Եթե ազգանունդ չկա ընտրական ցուցակներում, ում է հարկավոր դիմել»**: **Ա** տարբերակ՝ Ոստիկանությանը, **Բ** տարբերակ՝ Ընտրական հանձնաժողովին, **Գ** տարբերակ՝ Դատախազությանը, **Դ** տարբերակ՝ Թաղային հեղինակություններին: Այս հարցին ճիշտ պատասխանելիս կստանաք 500 000 դրամ:

Մուշո. - Ոստիկանությանը դիմելը, կարծում եմ, ճիշտ չէ, մենք հո գործ տվող չենք: Նրանցից ինչքան հեռու, էնքան ապահով: Ընտրական հանձնաժողովն, իր գործերով զբաղված, մեզ վրա չի էլ նայի: Իմ կարծիքով, սրանց բոլորի հետ էլ թաղային հեղինակությունները լավ հարաբերություններ ունեն, գուցե սրանց դիմելն է ճիշտ: Բայց ներքին ձայնս ասում է, որ պիտի դատախազին դիմենք, ոնց էլ լինի՝ մեր մարդն է:

Խաղավար. - Մի շտապեք, դեռ հնարավորություն ունեք արտաքին ձայնին լսելու. դահլիճի օգնությանը դեռ չեք դիմել:

Մուշո. - Ճիշտ ես ասում, դիմենք դահլիճին:

Դահլիճի քվեարկությամբ գերակշռողը ոստիկանությունն էր:

Մուշո. - Ինչ արած, պիտի համաձայնեմ, ձայն բազմաց, ձայն Աստծո:

Խաղավար. - Եթե ընդունում եք դահլիճի կարծիքը, պիտի ասեմ, որ ... դուք ճիշտ եք: 500000 Ձերն է:

Խաղավար. - Վերջին հարցը. **«Ով է դառնալու Երեւանի քաղաքապետ»** **Ա** տարբերակ՝ ՀՀԿ ներկայացուցիչը, **Բ** տարբերակ՝ ԲՀԿ ներկայացուցիչը, Գ տարբերակ՝ ՀԱԿ ներկայացուցիչը, **Դ** տարբերակ՝ ՀՅԴ ներկայացուցիչը: Շահող գումարն է մեկ միլիոն:

Մուշո. - Որքան գիտեմ՝ ՀՀԿ-ն **«Առաջ, Հայաստան»** գոռացողներն են, առաջ կգոռան հետ-հետ կերթան, ԲՀԿ-ն ասում է. **«Միասին կառուցենք բարգավաճ երկիր»**, առայժմ միայն իրենք են բարգավաճում , ՀԱԿ-ը **«Պայքար, պայքար մինչեւ վերջ»** գոռացողներն են, որի վերջը այդպես էլ չի երևում: ՀՅԴ-ն **«Մահ կամ Ազատություն»** կգոչե, եղբայր, մահը երբ ասես կլինի, ասա ազատությունը լինի: Չէ, երևի գումարս վերցնեմ, դուրս գամ խաղից: Ինձ թվում է՝ սրանցից ոչ մեկն էլ չի անցնի:

Խաղավար. - Դուք դեռ օգնության մեկ հնարավորություն ունեք՝ զանգ ընկերոջը:

Մուշո. - Իսկապես, մոռացել էի: Զանգենք ընկերոջս:

Խաղավար. - Ձեր ընկերոջ անունը, ինչո՞վ է զբաղվում:

Մուշո. - Սոցիոլոգ է, առանց նրա ոչ մի ընտրություն չի լինում: Ահարոն Իբեկյան:

Զանգ Ահարոնին: Ժամանակացույցը աշխատում է:

Մուշո. - Ահարոն, **«Ո՛վ է դառնալու Երեւանի քաղաքապետ»** հարցին ճիշտ պատասխանի դեպքում մեկ միլիոն կստանամ:

Ահարոն. - Դոլա՞ր, թե՞ դրամ: Ձգույշ եղիր, հաճախ դոլար են ասում, վերջին պահին դրամ են դարձնում, ես իմ դառը փորձից գիտեմ: Մի հարց էլ՝ գումարը հիմա՞ են տալիս, թե՞ ընտրությունից հետո:

Մուշո. - Երևի ընտրությունից հետո: Իմ պատասխանի ճշտությունը, ասում են, ընտրությունից հետո կերևա:

Ահարոն. - Դե, որ այդպես է, այնպիսի պատասխան տուր, որ ոչ մեկը գլուխ չհանի:

Մինչև Մուշոն կմտածեր պատասխանի մասին՝

Խաղավար. - Ձեր ժամանակը սպառված է: Ձեր շահած գումարը կազմում է 5000 դրամ: Շնորհավորում եմ:

Մուշո. - Դե ասա, ընտրակաշառք եք տալիս: Սա ձեզ վրա էժան չի նստի:

Էպիլոգ. - Մուշոն դիմումը ձեռքին շարժվում է դեպի դատախազություն:

ՎԵՐՋ:

Հեռուստախաղը վարեց ՄՆԱՑԱԿԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ,
«Հրազդան» հեռուստաընկերություն

«Горцарар»
Издается с июля 1999г.
Автор проекта- Ваграм БЕКЧЯН
Зам. гл. редактора - Роза ГУЛЯН
Գլխ. խմբագրի տեղակալ՝ Ռոզա ԳՈՒԼՅԱՆ
ИЗДАТЕЛЬ
Издательский Дом
«ШАГАНЭ»
Лицензия серия ИД № 02313
Журнал зарегистрирован в Министерстве Российской Федерации по делам печати, телерадиовещания и средств массовых коммуникаций
Регистрационный номер ПИ № 77-5015
Авторские материалы не рецензируются и не возвращаются. Переписку с читателями редакция не ведет. Мнение авторов может не совпадать с мнением редакции.
Материалы со знаком Գ публикуются на правах рекламы.
Редакция не несет ответственности за содержание рекламных объявлений.
ПЕРИОДИЧНОСТЬ ВЫХОДА - ЕЖЕМЕСЯЧНО
Отпечатано
ОАО «Калужская типография стандартов»
Формат А3, объём 4,0 п.л.
Тираж 1 500 экз. Зак. № 915.
Территория распространения: Российская Федерация, страны СНГ, зарубежные страны.
В номере использованы материалы «АЗГ», «АРАВОТ», «ГА», «ЕТЕР», «hАЙКАКАН ЖАМАНАК», «ИРАВУНК», «ЧИ», «НОВОЕ ВРЕМЯ», «ВОЗНИ».
Цена свободная.

Адрес редакции:
248001, г. Калуга,
ул. Суворова, 160.
Тел.: (4842) 56-59-29, 59-17-73.
E-Mail: gortsarar@list.ru
факс (4842) 565-929,
www.gortsarar.ru



E-Mail: bshahanev@kaluga.ru